Ճանաչի՛ր ինքդ քեզ

Կրթություն

Շաբաթաթերթ «Krtutiun» (education) weekly «Кртутюн» (образование) еженедельник 16.08.2023թ. չորեքշաբթի թիվ 34 (1111)

Վերափոխումն Սուրբ Աստվածածնի (Խաղողօրհնեք)

Սուրբ Մարիամ Աստվածածնի վերափոխման (Խաղողօրհնեք) տոնը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հինգ **տաղավար** (գլխավոր) տոներից է, նշվում է օգոստոսի 15-ի մոտակա կիրակի օրը: Այս տարի այն նշվեց անցած կիրակի՝ օգոստոսի 13-ին:

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի *խաչելությունից* հետո **Աստվածամայրը**, Իր **Որդու** պատգամին հնազանդ (Հովհ. ԺԹ 26-27), շուրջ 15 տարի ապրեց **Հովհաննես** Աստվածաբան առաքյալի խնամատարության ներքո: **Միածին Որդու** համբարձումից հետո **Աստվածամայրը** օրեր ու գիշերներ հարատեւում էր պահքի ու աղոթքի մեջ: Հաճախ այցելում էր **Տիրոջ** թափուր գերեզման եւ ծնկաչոք աղոթում:

Գողգոթա կատարած իր այցելություններից մեկի ժամանակ Նրա առջեւ հայտնվում է **Գաբրիել** հրեշտակապետը՝ արմավենու ճյուղը ձեռքին, ու ավետում **Սուրբ Աստվածածնի՝** երկրային աշխարհից դեպի վերին՝ երկնային **Երուսաղեմ** վերափոխվելու, ինչպես նաեւ դրա ժամանակի մասին: Վերադառնալով տուն՝ **Աստվածածինն** այդ մասին պատմում է Հովհաննեսին, իսկ հետո մյուս առաքյալներին ու ցույց տալիս Գաբրիել հրեշտակապետի կողմից տրված արմավենու ճյուղը, որից երկնային լույս էր տարածվում:

Այսպիսով, **Սուրբ Կույսը**, պատրաստվելով երկնային աշխարհ ճանապարհվելուն, պատվիրեց, որ իրեն թաղեն **Գեթսեմանիի** ձորակում: Ապա այդ սենյակում, պառկելով մահճին, մնաց միայնակ: Վերջապես լրացավ այն ժամը, երբ պետք է կատարվեր նրա՝ երկրից երկինք վերափոխումը:

Առաքյալները շրջապատել էին այն զարդարված մահիճը, ուր ընկողմանել էր **Աստվածամայրը**: Հանկարծ շողաց չտեսնված մի լույս: Ներկաները սարսափեցին, երբ սենյակի վերեւում՝ ճառագայթների ներքո, հայտնվեց **Հիսուս Քրիստոսը՝** հրեշտակների ու սրբերի ուղեկցությամբ:

Տեսնելով իր **Որդուն՝** հրեշտակների զորքով շրջապատված, **Աստվածամայրը** թեթեւորեն բարձրացավ մահճից, խոնարհվեց **Տիրոջը** եւ հանգիստ, ասես քնի մեջ, հոգին ավանդեց իր **Միածին Որդու** ձեռքը:

Աստվածամոր երկրավոր կյանքի վախճանը *«ննջում»* եւ ոչ թե *«մահ»* բառով է որակվում՝ հասկանալի դարձնելու համար նրա՝ երկինք փոխադրված լինելը:

շարունակությունը՝ էջ 10





Կառավարության նիստում

Փոփոխություն դպրոցի վարչատնտեսական մասի համակարգողի նշանակման կարգում

Կառավարության նիստում հաստատվել է 2023 թվականի մարտի 2-ի՝ *«Պետական հանրակրթական ուսումնական հաստատության վարչատնտեսական մասի համակարգողի նշանակման կարգը հաստատելու մասին»* N 259-Ն որոշման փոփոխությունը:

Լրամշակումները կատարվել են՝ հաշվի առնելով գործընթացի կազմակերպման ընթացքում ի հայտ եկած խնդիրներն ու բացերը, ինչպես նաեւ որոշ ժամկետների հստակեցման անհրաժեշտությունը:

Ըստ ներկայացված հիմնավորման՝ կատարված փոփոխություններով հստակեցվել է, մասնավորապես՝ ինչ ընթացակարգով է որոշվելու, թե ով է հավակնորդների ներկայացրած փաստաթղթերի համապատասխանությունը ստուգելու:

շարունակությունը՝ էջ 2

«Արհեստական բանականության սերունդ»

Հիմքում՝ մաթեմատիկայի խորացված ուսուցումն է

Սեպտեմբերից Հայաստանի վեց մարզերի եւ մայրաքաղաք Երեւանի 16 ավագ դպրոցներում կմեկնարկի *«Արհեստական բանականության (ԱԲ) սերունդ»* փորձարարական կրթական ծրագիրը: Այն մշակվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ Հայաստանի գիտության եւ տեխնոլոգիաների հիմնադրամի (FAST) կողմից:

Տեղի է ունեցել *«Արհեստական բանականության սերունդ»* ծրագրի մեկնարկի միջոցառումը, որին ներկա են եղել ՀՀ ԿԳՄՍ նախարար **Ժաննա Անդրեասյանը,** ՀՀ Ազգային ժողովի նախագահի տեղակալ **Հակոբ Արշակյանը,** Առողջապահության նախարար **Անահիտ Ավանեսյանը,** FAST-ի հիմնադիր տնօրեն **Արմեն Օրուջյանը,** *«ԱԲ սերունդ»* ծրագրում ընդգրկված դպրոցների տնօրենները ու ուսուցիչները, պետական տարբեր գերատեսչություններից, ակադեմիական եւ ինդուստրիալ ոլորտներից:

շարունակությունը՝ էջ 2

Այս համարում

● *Հայաստանի Հանրապետության հանրակրթական հիմնական (ընդհանուր, մասնագիտացված եւ հատուկ) պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2-րդ, 5-րդ, 7-րդ դասարաններում 2023-2024 ուսումնական տարում ուսումնական գործընթացի կազմակերպման ուղեցույց:*

տե՛ս՝ էջ 5-6

Այս համարում

● *Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի հանրակրթական հիմնական (ընդհանուր, մասնագիտացված եւ հատուկ) պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների առարկայական չափորոշիչներ եւ ծրագրեր փորձարկող 1-12-րդ դասարաններում 2023-2024 ուսումնական տարում ուսումնական գործընթացի կազմակերպման ուղեցույց:*

տե՛ս՝ էջ 7-9

Մշակույթ

Շնորհավորում ենք

«Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթում հաղթող է ճանաչվել **Կարեն Դուրգարյանը:**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի՝ N 208-Ա/1 հրամանով՝ 2023 թ. օգոստոսի 9-ին հայ դիրիժոր, ՀՀ վաստակավոր արտիստ Կարեն Դուրգարյանը նշանակվել է *«Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոն»* ՊՈԱԿ-ի տնօրեն՝ հինգ տարի ժամկետով:

Փոփոխություն դպրոցի վարչատնտեսական մասի համակարգողի նշանակման կարգում

սկիզբը՝ էջ 1

Հստակեցվել է նաեւ լիազորված մարմնի ղեկավարի եւ հավակնորդի հանդիպման, պայմանագրի կնքման ժամկետների, ինչպես նաեւ հավակնորդ չլինելու կամ որեւէ հավակնորդի հետ պայմանագիր չկնքելու դեպքում նոր հայտարարություն հրապարակելու կարգավորումը:

Հավակնորդների փաստաթղթերի ուսումնասիրության համար լիազոր մարմնի ղեկավարը կսահմանի պատասխանատու ստորաբաժանում, որն էլ սահմանված ժամկետում կապահովի աշխատանքների իրականացումը:

Ուսումնական հաստատության համակարգողը կնշանակվի հարցազրույցի արդյունքում:

Նոր փոփոխությամբ սահմանվում է նաեւ, որ վարչատնտեսական մասի համակարգողի նշանակման մրցույթի հարցազրույցին կարող են մասնակցել նաեւ անձնակազմի կառավարման եւ հանրակրթության ոլորտը համակարգող ստորաբաժանումների ղեկավարները, ինչը հնարավորություն է տալիս կանխելու լիազոր մարմնի ղեկավարի կողմից միանձնյա որոշման ընդունման դեպքերը:

Պաշտոնի նշանակման եռօրյա ժամկետ է սահմանվել՝ հաշվի առնելով գործառույթների կատարման անհետաձգելի բնույթը:

Սահմանվել են այն դեպքերը, երբ հավակնորդներին չի թույլատրվում մասնակցել հարցազրույցին:

Հայտարարության հրապարակում

Դպրոցներում վարչատնտեսական համակարգողի թափուր տեղ առաջանալու օրվանից հաշված՝ առավելագույնը 30, բայց ոչ պակաս, քան 25 աշխատանքային օր առաջ հրապարակվում է հայտարարություն՝ պետական ուսումնական հաստատության համակարգողի թափուր տեղն զբաղեցնելու նպատակով:

Լիազոր մարմինը՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը, մարզպետարանը, Երեւանի քաղաքապետարանը, համակարգողի թափուր տեղի հայտարարությունը 3 աշխատանքային օրվա ընթացքում հրապարակում է www.azdarar.am կայքում՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության պաշտոնական կայքում, իսկ մարզպետարանների եւ Երեւանի քաղաքապետարանի ենթակայության հաստատությունների դեպքում՝ նաեւ համապատասխան մարզպետարանի կամ Երեւանի քաղաքապետարանի պաշտոնական կայքում:

Թափուր տեղը համալրելու համար հայտերն ընդունում է տվյալ լիազորված մարմնի համապատասխան ստորաբաժանումը՝ www.azdarar.am կայքում սկսած հայտարարության հրապարակման օրվանից՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում:

Նշանակում

Լիազորված մարմնի ղեկավարը հավակնորդների փաստաթղթերը ստանալուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, անցկացնում է հարցազրույց (յուրաքանչյուր հավակնորդի հետ առանձին, նույն օրվա ընթացքում), որին կարող են մասնակցել նաեւ անձնակազմի կառավարման եւ հանրակրթության ոլորտը համակարգող ստորա-բաժանումների ղեկավարները: Հարցազրույցի դրական արդյունքի դեպքում լիազորված մարմնի ղեկավարը հավակնորդներից մեկի հետ կնքում է աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով:

Մասնակիցներից որեւէ մեկի՝ սահմանված չափանիշներին չհամապատասխանելու, հավակնորդ չլինելու կամ հարցազրույցի արդյունքում հավակնորդներից որեւէ մեկի հետ պայմանագիր չկնքելու դեպքում թափուր տեղի համալրման համար 3 աշխատանքային օրվա ընթացքում հրապարակվում է նոր հայտարարություն:

Հիմքում՝ մաթեմատիկայի խորացված ուսուցումն է

սկիզբը՝ էջ 1

ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը շնորհավորել է ներկաներին ծրագրի մեկնարկի կապակցությամբ, շնորհակալություն է հայտնել FAST հիմնադրամին՝ քրտնաջան աշխատանքի, արդյունավետ համագործակցության համար եւ հույս հայտել, որ դպրոցների հետ համատեղ աշխատանքի շնորհիվ ծրագիրը շարունակական կլինի:

«Շատ ուրախ եմ, որ արդեն ունենք այնպիսի ծրագիր, որը թույլ է տալիս մի քանի ուղղությամբ աջակցել մեր երկրում ընթացող կրթական բարեփոխումներին: Տեխնոլոգիական եւ մաթեմատիկական կրթության զարգացմամբ ստեղծվում են էապես նոր գործիքներ եւ պայմաններ, որոնք նպաստում են ԲՏԵՄ կրթության որակի բարելավմանը: Կարեւորում եմ, որ ծրագիրն իր գործիքակազմով ամբողջությամբ համապատասխանում է նոր չափորոշչին. նախագծային ուսուցում, կրեդիտային համակարգ, ճկուն ու նորարար մոտեցումներ: Այս ամենը մեր ուսուցիչների եւ աշակերտների համար ստեղծելու է բոլորովին նոր միջավայր: Գիտակցում ենք, որ դժվարին ճանապարհ ենք անցնելու, բայց արդյունքները գերազանցելու են մեր սպասելիքները»,- նշել է ԿԳՄՍ նախարարը:

Ժաննա Անդրեասյանը ծրագիրը կարեւոր է համարել նաեւ ուսուցիչների կարողությունների զարգացման տեսանկյունից. *«Վերապատրաստվելու են թե՛ «Մաթեմատիկա», թե՛ «Ինֆորմատիկա» դասավանդող ուսուցիչները, որպեսզի կարողանան իրականացնել այդ ավելի բարդ ծրագրերի դասավանդումը դպրոցներում»:*

Նախարարը հատուկ ընդգծել է համագործակցությունը մասնավոր հատվածի հետ, քանի որ արհեստական բանականության ուսուցումը դպրոցներում իրականացնելու են ոլորտային ընկերությունների ներկայացուցիչները. *«Այս առումով՝ Հայաստանը առաջամարտիկ է, որովհետեւ առաջին երկրներից ենք, որտեղ արհեստական բանականությունը՝ որպես ծրագրային դասընթաց ներդրվելու է դպրոցներում»:*

Ժաննա Անդրեասյանը շնորհակալություն է հայտնել նաեւ այն դպրոցների ուսուցիչներին, որոնք ընդգրկված են ծրագրում. *«Յուրաքանչյուր նոր կրթական ծրագիր ենթադրում է լրացուցիչ աշխատանք. շնորհակալ եմ ուսուցիչներին եւ տնօրեններին սրտացավության, հավելյալ ջանքերի եւ կրթությանը տրվող կարեւորության համար»:*

«Հաշվի առնելով աշխարհում արհեստական բանականության ոլորտի սրընթաց զարգացումներն ու մեր հավակնությունները կարեւոր տեղ զբաղեցնելու աշխարհի ԱԲ քարտեզի վրա՝ մենք մեր գործընկերների հետ հանձն առանք այս ծրագիրը: «ԱԲ սերունդ»-ը կօգնի, որ մեր երեխաներն ու երկիրն ապագայում մրցունակ լինեն աշխարհի մակարդակով: Հավատում ենք, որ ծրագիրը հաջողելու է, եւ կարճ ժամանակում հասանելի է դառնալու հանրապետության բոլոր դպրոցներում, ինչն էլ կնպաստի երկրում համակարգային փոփոխությանը»,- ասել է FAST-ի հիմնադիր տնօրեն Արմեն Օրուջյանը:

Այս ուսումնական տարվանից ծրագրին միանալու են Արմավիրի մարզի երկու, Գեղարքունիքի՝ մեկ, Լոռու՝ երեք, Կոտայքի՝ չորս, Սյունիքի՝ մեկ, Շիրակի՝ երկու եւ Երեւանի երեք կրթական հաստատությունները՝ ԱԲ կրթությունը հասանելի դարձնելով շուրջ 300 աշակերտի:

«ԱԲ սերունդ» ծրագիրը նպատակ ունի ստեղծելու արհեստական բանականության ոլորտի գիտնականի ու նորարարի կրթական ուղին՝ սկսած դպրոցից: Ծրագիրը ներդրվում է ավագ դպրոցների 10-րդ դասարանում. աշակերտները կուսումնասիրեն խորացված մաթեմատիկա, ծրագրավորում՝ *«Python»* լեզվի հիման վրա, արհեստական բանականություն՝ ընդհանուր եւ խորացված ծրագրով: 10-րդ դասարանի ավարտին գիտելիքի ստուգման արդյունքներով աշակերտները կարող են շարունակել ԱԲ կրթությունը՝ խորացնելով գիտելիքները տարբեր ուղղություններով: Արդեն 12-րդ դասարանում կիրականացնեն պրակտիկ նախագծեր ԱԲ ոլորտում:

Ծրագիրը միտված է ապահովելու մասնագիտական կողմնորոշում՝ արհեստական բանականության (ԱԲ) հետազոտողի մասնագիտության հանդեպ հետաքրքրության բարձրացման եւ այս ուղղությամբ հետագա կրթությունը շարունակելու համար:

Նախատեսվում են նաեւ դասավանդողների վերապատրաստումներ եւ մենթորական ծրագիր՝ գործընկեր կառույցների հետ համագործակցությամբ:

Ծրագրի փորձարարական ժամկետ է սահմանվել 2023 թվականի սեպտեմբերի 1-ից մինչեւ 2026 թվականի օգոստոս ամիսը, որից հետո այն նախատեսվում է ընդլայնել ու հասանելի դարձնել ավելի շատ դպրոցների եւ մեծաթիվ աշակերտների համար:

Միջոցառման ավարտին *«Արհեստական բանականության սերունդ»* ծրագրում ընդգրկված դպրոցների տնօրեններին հանձնվել են հավաստագրեր:

«Արհեստական բանականության (ԱԲ) սերունդ» փորձարարական կրթական ծրագրում ընդգրկված են Արմավիրի մարզի Վաղարշապատի Մ. Գորկու անվան թիվ 5 ավագ դպրոցը, *«Էօրնեկեան»* հանրակրթական դպրոցը, Գեղարքունիքի մարզի Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ դպրոցը, Լոռու մարզի ՀԱՊՀ հիմնադրամի Վանաձորի մասնաճյուղի ավագ դպրոցը, Վանաձորի Գրիբոյեդովի անվան թիվ 11 ավագ դպրոցը, Վանաձորի մաթեմատիկայի եւ բնագիտական առարկաների խորացված ուսուցմամբ հատուկ դպրոցը, Կոտայքի մարզի Չարենցավանի Մգ Մաշտոցի անվան ավագ դպրոցը, Հրազդանի Հ. Օրբելու անվան թիվ 13 ավագ դպրոցը, Հրազդանի Խգ Աբովյանի անվան թիվ 1 ավագ դպրոցը, Եղվարդի թիվ 1 ավագ դպրոցը, Սյունիքի մարզի Կապանի թիվ 2 ավագ դպրոցը, Շիրակի մարզի Գյումրու թիվ 1 ավագ դպրոցը, Գյումրու տնտեսագիտական վարժարանը, Երեւանի թիվ 198 ավագ դպրոցը, Երեւանի Գյուլբենկյանի անվան թիվ 190 ավագ դպրոցն ու Եվրասիա հենակետային վարժարանը:

Երիտասարդների միջազգային օրվա առթիվ

Երիտասարդական մայրաքաղաք Մեծամորում

ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ՝ Հայաստանի 2023 թ. երիտասարդական մայրաքաղաք Մեծամորում տարաբնույթ միջոցառումներով նշվել է Երիտասարդների միջազգային օրը: Այն այս տարի կրել է *«Կանաչ հմտություններ՝ երիտասարդների համար»* խորագիրը:

Միջոցառումներին մասնակցել են ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Արթուր Մարտիրոսյանը,** ՄԱԿ-ի հանձնակատարի ժամանակավոր պաշտոնակատար **Նոնա Սկաուն,** ԿԳՄՍՆ երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ եւ շարունակական կրթության վարչության պետ **Զարա Ասլանյանը,** համայնքային իշխանությունների ներկայացուցիչներ:

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը շնորհավորել է երիտասարդներին՝ միջազգային օրվա կապակցությամբ՝ կարեւորելով նրանց ներգրավվածությունը էկոլոգիական միջավայրի պահպանման, մարտահրավերների դիմագրավման գործում:

Փոխնախարարը կոչ է արել երիտասարդներին լինել նախաձեռնող, ստեղծարար եւ չվախենալ համարձակ գաղափարներից. *«Դուք եք նոր փոփոխությունների առաջամարտիկը: Մի՛ վախեցեք նոր գաղափարներից, եղե՛ք ստեղծարար, զարգացրե՛ք ձեր համայնքը՝ շարունակաբար կրթվելով ու նոր հմտություններ ձեռք բերելով: Լավ քաղաքացի լինելու համար պետք է պարզապես սիրել հայրենիքը՝ ցանկացած ոլորտում առաջնորդվելով պետականամետ մտածողությամբ՝ նպաստելով հանրային բարօրությանը»:*

Արթուր Մարտիրոսյանն ընդգծել է, որ ԿԳՄՍ նախարարությունը մշտապես մեծացնում է երիտասարդների կարողությունների զարգացման եւ ինքնիրացման հնարավորությունները՝ խրախուսելով

նրանց մասնակցությունը տարբեր ծրագրերին:

Օրվա շրջանակում Մեծամոր համայնքում կազմակերպվել են տարբեր միջոցառումներ, այդ թվում՝ վարպետության դասեր, սպորտային-ժամանցային մրցույթ, երիտասարդական հնարավորությունների տոնավաճառ, քաղաքականության վերաբերյալ իրազեկման արշավ, ինտերակտիվ խաղ, աշխատարաններ՝ երիտասարդության մասին օրենքի, երիտասարդական աշխատողի, երիտասարդական ոլորտում աջակցության մասին թեմաներով՝ ապահովելով ներառականությունը:

Մեծամորցի երիտասարդները մեծ ոգեւորությամբ են մասնակցել միջոցառումներին՝ նոր գիտելիքների եւ հմտությունների ձեռքբերման ակնկալիքով: Նարեն, որ ԵՊՀ կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի ուսանող է, մասնակցել է *«Բատիկա»* վարպետության դասին: *«Ինձ համար նոր ոլորտ էր: Որոշեցի մասնակցել՝ հասկանալու համար արվեստի այդ ճյուղի նրբությունները: Ընթացքը եւ արդյունքը շատ հետաքրքիր էին»,*- տպավորություններով կիսվել է Նարեն: Իսկ *«Սթրիթ Արթ»* վարպետության դասի ղեկավարը՝ **Արեգ Բալայանը,** որպես մասնագետ, կարեւորել է իր նկարչական հմտությունների փոխանցումը պատանիներին եւ երիտասարդներին, նրանց շրջանում հետաքրքրության մեծացումը եւ նրանց արվեստով վարակելը:

Միջոցառումներն իրականացրել են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամը, ՅՈՒՆԻՍԵՖ-ը, ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակը, ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակը, Մեծամորի երիտասարդական խորհրդարան ՀԿ-ն, *«Ընտանիք եւ համայնք»* ՀԿ-ն, *«Կանայք կլիմայում եւ էներգետիկայում»* ՀԿ-ն, *«The body shop»*-ը, *«Մունետիկ»* մանկապատանեկան մշակութային ՀԿ-ն եւ Մեծամորի համայնքապետարանը:

Գիտություն

Քննարկվել է ատեստավորման կարգը

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության Գիտության կոմիտեում տեղի է ունեցել *«Գիտական կադրերի ատեստավորման կարգը, գիտական պետական կազմակերպություններում գիտական եւ ճարտարագիտատեխնիկական պաշտոնները եւ դրանց գնահատման նվազագույն չափանիշները հաստատելու մասին»* ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ հանրային լսում:

Քննարկման մասնակիցներին ներկայացնելով նախագիծը՝ Գիտության կոմիտեի նախագահ **Սարգիս Հայոցյանը** նշել է, որ նախագիծը հանրային քննարկման է դրվել երկրորդ անգամ: Հաշվի առնելով առաջին քննարկման ժամանակ ստացված առաջարկություններն ու *«Գիտական եւ գիտատեխնիկական գործունեության մասին»* օրենքում այս տարվա մայիսին կատարված լրացումներն ու փոփոխությունները՝ կատարվել են լրամշակումներ:

Գիտության կոմիտեի նախագահի տեղակալ **Արթուր Մովսիսյանը** նշել է, որ նախագծով սահմանվում են ատեստավորման արդյունքում տվյալ տարակարգը հայցող գիտական աշխատողներին ներկայացվող քանակական եւ որակական նվազագույն պահանջները: Ներդրված նոր մոտեցման համաձայն՝ յուրաքանչյուր կազմակերպություն կարող է սահմանել նաեւ լրացուցիչ չափանիշներ: Հավելյալ չափանիշները հաստատվում են կազմակեպության ղեկավարի կողմից՝ գիտական խորհրդի առաջարկությամբ:

Նոր նախագծի համաձայն՝ ատեստա-

վորումն իրականացնող հանձնաժողովն ատեստավորվողին տալիս է *«Համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին», «Չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին», «Համապատասխանում է իր զբաղեցրած պաշտոնից ավելի բարձր պաշտոնին»* գնահատականներից մեկը:

Հանրային լսման ժամանակ ծավալվել է քննարկում գիտական աշխատողի տարակարգերի համար պահանջվող՝ միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում հրատարակված գիտական աշխատություններ ունենալու պահանջի վերաբերյալ:

Կոմիտեի ներկայացուցիչները նշել են, որ քանակական ու որակական չափանիշները սահմանվել են՝ հաշվի առնելով վերջին տարիներին հայ գիտնականների հրապարակումները, ոլորտում կատարված փոփոխություններն ու այլ երկրների փորձը, եւ որ դրույթը պարտադիր է միջազգային գիտական համագործակցության խթանման եւ աշխարհի մակարդակով մրցունակ գիտական արտադրանք տալու համար: Նշվել է, որ նոր կարգով առաջին անգամ համապետական ատեստավորում կանցկացվի 2026 թվականին, եւ գիտաշխատողները ժամանակ ունեն՝ պահանջվող հրապարակումների ուղղությամբ աշխատելու համար:

Սոցիալական

Բարելավումներ՝ փոխհատուցման կարգում

ԿԳՄՍ նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել հանրակրթական դպրոցների մանկավարժների եւ դպրոցահասակ երեխաների տրանսպորտային ծառայությունների փոխհատուցման կարգի փոփոխության նախագիծը:

Առաջարկվում են մի շարք բարելավումներ:

- Մանկավարժներին տրանսպորտային ծառայությունների փոխհատուցումը տրվում է ՀՀ մարզերի հանրակրթական դպրոցների այն ուսուցիչներին, զինղեկներին, ուսուցչի օգնականներին եւ հատուկ մանկավարժներին, որոնք աշխատում են իրենց փաստացի բնակության վայրից ավելի քան 5 կմ հեռավորությամբ տեղակայված բնակավայրում՝ 0.5 եւ ավելի հաստիքային դրույքով:

- Տրանսպորտային ծառայությունների փոխհատուցումը տրվելու է նաեւ դպրոցահասակ երեխաներին, որոնք իրենց փաստացի բնակության վայրում (համայնքում, բնակավայրում) հաստատության բացակայությամբ պայմանավորված կամ առկա հաստատությունում տվյալ մակարդակի ծրագրի բացակայությամբ պայմանավորված՝ ուսումը ստանում են այլ բնակավայրում տեղակայված հաստատությունում:

- Փոխհատուցման առավելագույն չափ է համարվում (հաշվարկված երկու ուղղությամբ՝ յուրաքանչյուր ներկա ստացած օրվա համար) միայն միկրոավտոբուսային երթուղի լինելու դեպքում՝ միկրոավտոբուսային երթուղիների համար սահմանված, իսկ միկրոավտոբուսային եւ ավտոբուսային երթուղիներ լինելու դեպքում՝ ավտոբուսային երթուղիների համար սահմանված սակագների չափերը: Միկրոավտոբուսային եւ ավտոբուսային երթուղիների բացակայության դեպքում՝ յուրաքանչյուր կմ-ի համար հաշվարկվում է 25 ՀՀ դրամ, բայց ոչ պակաս քան 200 ՀՀ դրամը (հաշվարկված երկու ուղղությամբ) յուրաքանչյուր ներկա ստացած օրվա համար: Միկրոավտոբուսային եւ ավտոբուսային երթուղիների բացակայության դեպքում տվյալ բնակավայրից տվյալ դպրոց երթեւեկող ուսուցիչների եւ դպրոցահասակ երեխաների թիվը 4 եւ դրանից պակաս լինելու դեպքում փոխհատուցումը տրվում է՝ 1000 ՀՀ դրամ (հաշվարկված երկու ուղղությամբ) յուրաքանչյուր ներկա ստացած օրվա համար՝ հավասար չափերով բաշխված այդ ուսուցիչների եւ դպրոցահասակ երեխաների միջեւ:

- Յուրաքանչյուր անձի ամսական փոխհատուցման առավելագույն չափը չի կարող գերազանցել 20200 ՀՀ դրամը:

- Կարգով առաջարկվում է նաեւ մարզային դպրոցներին հատկացնել համապատասխան ֆինանսավորում՝ դպրոցականների բաժանորդային ծրագրից օգտվելու նպատակով տրանսպորտային ծախսերի ապահովման նպատակով:

Ըստ ներկայացված հիմնավորման՝ նախկին կարգում առկա չէին դպրոցական բաժանորդային համակարգի ծրագրից օգտվելու նպատակով տրանսպորտային ծախսերի փոխհատուցման վերաբերյալ կարգավորումներ: Սույն փոփոխությամբ հնարավորություն է տրվում հաստատությանն իր տեղակայման վայրից ավելի քան 30 կմ հեռու գտնվող մշակութային հաստատություններ այցելել՝ տրանսպորտային ծախսի պետական աջակցությամբ: Ըստ այդմ՝ ուսումնական հաստատությունը տվյալ տարվա ընթացքում նախատեսվող այցելությունների վերաբերյալ հայտը մինչեւ յուրաքանչյուր տարվա հունվար ամսվա վերջին աշխատանքային օրվա ավարտը կառավարման լիազոր մարմին է ներկայացնելու մշակութային կազմակերպությունների հետ նախապես համաձայնեցված հայտը:

Էլեկտրոնային ծրագրային ապահովման առկայության դեպքում Կրթության կառավարման տեղեկատվական համակարգում տրանսպորտային ծառայությունների դիմաց փոխհատուցում ստացող անձանց մասին տեղեկատվությունը կթվայնացվի՝ հնարավորինս զերծ մնալով անճշտություններից, ինչպես նաեւ դպրոցական բաժանորդային համակարգի ծրագրից օգտվելու դեպքում եւս մանկավարժներին եւ դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծառայությունների դիմաց կտրվի փոխհատուցում:

Նախագիծը հրապարակված է e-draft միասնական տեղեկատվական հարթակում. մինչեւ օգոստոսի 20-ը քաղաքացիները կարող են ներկայացնել իրենց դիտողություններն ու առաջարկությունները:

Մշակույթ

Աշխատանքային այց՝ Տիրինկատար (Կարմիր սար) հնավայր

ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի եւ Վենետիկի համալսարանի վիշապաքարերը հետազոտող արշավախումբը 2012 թ. Արագածի լեռնազանգվածի հարավային բարձրադիր հատվածում, ծովի մակերեւույթից մոտ 3000 մ բարձրության վրա, հայտնաբերել է նոր հնագիտական հուշարձան՝ **Տիրինկատար** (Կարմիր սար) անվամբ:

Այստեղ մոտ 40 հա մակերես ունեցող սարահարթի վրա կենտրոնացած են 12 վիշապաքարեր, որոնք առնչվում են կրոմլեխատիպ կառույցներին (հարթակներին): Դրանց շրջակայքում կան այլ կրոմլեխներ, ժայռապատկերներ, կլորավուն կառույցներ, հսկայի տներ, եւ այլն: Սկսած 2013 թ. պեղումներ են իրականացվում Տիրինկատարում՝ վիշապաքարերի երեւույթն ավելի խորն ընկալելու եւ այդ կոթողները թվագրելու նպատակով: Հայկական կողմից արշավախմբի ղեկավարը ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի տնօրեն **Արսեն Բոբոխյանն** է:

ՀՀ ԿԳՄՍՆ պատմության եւ մշակույթի հուշարձանների պահպանության վարչության, *«Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն»* եւ *«Պատմամշակութային արգելոց-թանգարաններ եւ պատմական միջավայրի պահպանության ծառայություն»* ՊՈԱԿ-ների մասնագետները աշխատանքային այցով Արագածոտնի մարզի Տիրինկատար հնավայրում էին: Աշխատանքային խումբը ծանոթացել է 10-րդ տարին իրականացվող վիշապաքարերի պեղումների ընթացքին, ուսումնասիրվել են հուշարձանների եւ նախատեսվող պահպանական գոտիների սահմանները:

Համայնքի ներկայացուցիչների ներկայացմամբ՝ տարածքը իրենց համար միշտ սրբավայր է եղել, իսկ տարածքում առկա վիշապաքարերն ու ժայռապատկերները պահպանվել են համայնքի կողմից:

Առաջիկայում կազմված փաստաթղթերը կներկայացվեն նախարարություն եւ կքննարկվեն փորձագիտական հանձնաժողովի կողմից՝ Տիրինկատար հնավայրին նորահայտ հուշարձանի կարգավիճակ տալու եւ պահպանական գոտին հաստատելու համար:

«Տարվա լավագույնները»

2023 թվականի մրցույթին մասնակցելու իրավեր

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը հայտարարում է ***«Տարվա լավագույնները»*** մրցույթի հայտերի ընդունելություն:

Մրցույթին կարող են մասնակցել հանրակրթական եւ նախադպրոցական ուսումնական հաստատությունների՝

- ուսուցիչները եւ դաստիարակները,

- տնօրենները,

- ուսումնաօժանդակ կազմի աշխատակիցները:

Մրցույթը կազմակերպվում է՝ հետեւյալ առանձին անվանակարգերով.

1) հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչական լավագույն ծրագիր կամ նախաձեռնություն,

2) հանրակրթական ուսումնական հաստատության կառավարման լավագույն ծրագիր կամ նախաձեռնություն,

3) հանրակրթական ուսումնական հաստատության ուսումնաօժանդակ գործունեության լավագույն ծրագիր,

4) նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական լավագույն ծրագիր կամ նախաձեռնություն,

5) նախադպրոցական ուսումնական հաստատության կառավարման լավագույն ծրագիր կամ նախաձեռնություն,

6) նախադպրոցական ուսումնական հաստատության ուսումնաօժանդակ գործունեության լավագույն ծրագիր:

Մրցույթի մասնակիցը պետք է ունենա տվյալ ուղղությամբ առնվազն 2 տարվա գործունեության փորձ:

Մրցույթին կարող է ներկայացվել ինչպես անհատական ծրագիր առանձին մասնակցի կողմից, այնպես էլ համատեղ ծրագիր մասնակիցների խմբի կողմից՝ բաղկացած առավելագույնը 3 անդամներից: Խմբային հայտի դեպքում կարող են ներառված լինել ինչպես միեւնույն, այնպես էլ տարբեր ուսումնական հաստատությունների ներկայացուցիչներ:

Մրցույթն անցկացվում է հետեւյալ երեք փուլերով՝

- ծրագրային առաջարկների ընդունում,

- ծրագրային առաջարկների գնահատում եւ մրցույթի արդյունքների ամփոփում,

- մրցույթի արդյունքներով ընտրված ծրագրային առաջարկների պարգեւատրում:

Ծրագրային առաջարկների ներկայացման վերջնաժամկետը սույն թվականի **օգոստոսի 28-ն է (ժամը 18:00-ն):** Ժամկետից ուշ ներկայացված ծրագրային առաջարկները չեն դիտարկվի: Ոչ ամբողջական ծրագրային առաջարկների պարագայում, հանձնաժողովի որոշմամբ, տրվում է 3 աշխատանքային օր (միայն մեկ անգամ)՝ բացակայող փաստաթղթերի ներկայացման համար: Տրված ժամկետից հետո ներկայացված ոչ ամբողջական ծրագրային առաջարկները չեն դիտարկվի:

Բոլոր ծրագրային առաջարկները գնահատվում են հանձնաժողովի կողմից առավելագույնը տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Ծրագրային առաջարկը գնահատվում է հարյուր միավորային համակարգով՝ ըստ վերոնշյալ չափանիշների (համապատասխանությունը՝ առավելագույնը **10** միավոր, հիմնավորվածությունը՝ **30** միավոր, իրատեսականությունը՝ **30** միավոր եւ շարունակականությունը՝ **30** միավոր):

Մրցույթի արդյունքներով ընտրված ծրագրային առաջարկները կհրապարակվեն նախարարության պաշտոնական կայքում՝ արդյունքներն ամփոփելուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

«Տարվա լավագույնները» մրցույթի արդյունքում նախատեսվում է դրամական պարգեւի տեսքով խրախուսել շուրջ **22** ծրագիր. անհատական ծրագրերի դեպքում՝ առավելագույնը **հինգ հարյուր հազար ՀՀ դրամ** (ներառյալ հարկերը եւ տուրքերը), խմբային ծրագրերի դեպքում՝ առավելագույնը **մեկ միլիոն ՀՀ դրամ** (պարգեւատրման չափը կարող է փոփոխվել՝ ներկայացված ծրագրերի եւ դրանց գնահատման արդյունքներից կախված): Մասնակցի (կամ խմբի) կողմից ներկայացվող ծրագրային առաջարկը կարող է ներկայացվել միայն մեկ անվանակարգում:

Ծրագրային առաջարկները պետք է ուղարկել **secretariat-@escs.am** էլեկտրոնային հասցեին՝ կցելով նաեւ ուղեկցող գրությունն՝ ուղղված նախարարին:

Հարցերի դեպքում՝ զանգահարել (010) 59-96-20 հեռախոսահամարով:

Արհեստական բանականություն

Որպես ուսուցչի եւ աշակերտի օգնական

Մարդիկ հաճախ սովոր են որոշակի վարվելակերպի եւ ընթացակարգերի, որի արդյունքում՝ այս կամ այն գործընթացի ըմբռնումը մնում է նույն մակարդակի վրա, եւ դա է, որ խանգարում է նրանց ստեղծագործորեն զարգանալ: Արհեստական բանականությամբ օժտված բոտ ChatGPT-ին այլեւս իրականություն է, որը հաշվի առնելով ուսուցիչներն, ինչպես նաեւ աշակերտները պետք է պատրաստ լինեն ամեն օր շփվելու արհեստական ինտելեկտի հետ ու օր առաջ հմտանալ ChatGPT բոտի օգտագործման եւ օգուտներ քաղելու գործում:

Ճանաչել իմացածի եւ չիմացածի սահմանները, ձեւավորել թվային եւ մեդիա կարողունակություն, գտնել տեղեկություններ, քննադատորեն վերլուծել դրանք, անել եզրակացություններ հիմնվելով ստացված տվյալների եւ տեղեկատվության վրա՝ փաստերն օգտագործելով գաղափարներ հիմնավորելու համար, ձեւավորել ժամանակի արդյունավետ կառավարման հմտություն եւ հաջողությամբ կառավարել սեփական ժամանակը, ճանաչել տեղեկատվության աղբյուրների ու մեթոդների բազմազանությունը, որոշել խնդրի լուծման համար անհրաժեշտ տեղեկույթը, գտնել խնդրի լուծման ստեղծագործ մոտեցումներ եւ համեմատել դրանք, վերլուծել իր ուսումնառության գործընթացը, ընտրել ինքնակրթության մեթոդներ եւ գնահատել դրանց արդյունավետությունը՝ ի թիվս այլոց սրանք են հանրակրթության պետական չափորոշչով նախատեսված վերջնարդյունքները, որոնց հասնելու ճանապարհային քարտեզի վրա, որպես լրացուցիչ գործիքակազմի ներդրման գաղափար, պետք է դիտարկել արհեստական բանականությամբ աշխատող գործիքների կիրառությունը:

Տնտեսության ժամանակակից հայեցակարգերի եւ դրանցից բխող միջոցառումների ելակետն է նորի կիրարկմամբ փոփոխություններ իրականացնելը եւ զարգացում ապահովելը: Այս մոտեցումը վերագրելի է տնտեսության ճյուղային կառուցվածքի ցանկացած ոլորտին, այդ թվում կրթությանը՝ մասնավորապես հանրակրթությանը:

Ուսուցման դաս-դասարանային համակարգում կրթական խնդիրների լուծման գործում արհեստական բանականությամբ աշխատող համակարգերն, ի մասնավորի ներկայում լայն տարածում գտած մեքենայական ուսուցման հիմքով ստեղծված գեներատիվ լեզվի նոր մոդել ChatGPT-ին, դասի պլանավորման արժեքավոր գործիք է, որը խնայում է ուսուցչի ժամանակը եւ զուգահեռ ազդում ուսուցման արդյունավետության բարձրացման վրա՝ հսկայական քանակությամբ տվյալների հիման վրա վարկյանների ընթացքում աջակցելով կառուցվածքային լավ եւ գրավիչ դասերի նախագծման հարցերում: ChatGPT-ին կարողանում է հարցումների հիման վրա պատասխանել հարցերին, ընդունել սխալները եւ ուղղել դրանք, մատնանշել այս կամ այն հարցին տրված պատասխանը հիմնավորող սկզբնաղբյուրներըգ ChatGPT բոտի հետ աշխատելու առանցքային սկզբունքը ճիշտ հարց ձեւակերպելն է: Այս գործիքը կիրառության մեջ դնելը ներկայումս չի պահանջում որեւէ չափի ֆինանսական միջոցների ներգրավում, թե՛ պետության, թե՛ առանձին վերցված կազմակերպության՝ դպրոցի մակարդակում, ինչը բացարձակ առավելություն է կրթական գործընթացներում տեխնոլոգիական այլ համակարգերի եւ թվային գործիքակազմերի ներդրման եւ օգտագործման համեմատությամբ:

Արդյոք արհեստական բանականության ներկա հնարավորությունները կարող են դուրս մղել մասնագիտություններ, տվյալ դեպքում՝ ուսուցչի մասնագիտությունը. մեր օրյա տնտեսության զարգացման տեմպերը եւ տվյալահեն վերլուծությունները փաստում են, որ տնտեսական եւ սոցիալական բարդ ենթահամակարգ հանդիսացող ժամանակակից աշխատաշուկայում առավել մրցունակ է մարդ-արհեստական բանականություն զույգը: Միաժամանակ ուսուցիչն է, որ պետք է ուսումնասիրի աշակերտի արժեհամակարգի փոխակերպումները թվային դարաշրջանում, բացահայտի արժեքային նոր կողմնորոշիչների ձեւավորման առանձնահատկությունները, վեր հանի ժամանակակից աշխարհում աշակերտի բարոյական արժեքների փոխակերպման տրամաբանությունն ու իրերի կարգը, եւ վերլուծի աշակերտի արժեքային կողմնորոշիչների հնարավոր փոխակերպումներն ապագայում:

Արհեստական բանականությունը, որպես ուսուցման կազմակերպման օժանդակ, լրացուցիչ ձեւ եւ ուսումնական աշխատանքի ընթացակարգ, ինչպեսեւ ցանկացած առաջընթաց, իր հետ բերում է նաեւ որոշակի վտանգներ եւ ռիսկեր, որոնք անհրաժեշտ է դարձնել կառավարելի: Այստեղ կարեւորվում է պետության ռազմավարությունը եւ կարգավորող դերը տեղեկատվական համակարգերի կառավարման հարցում, այդ թվում՝ կիբերանվտանգության ոլորտում:

Արսեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Երեւանի քաղաքապետարանի ֆինանսական վարչության՝ հանրակրթական ուսումնական հաստատությունների ֆինանսական գործառույթների կազմակերպման բաժնի պետ

Հայաստանի Հանրապետության հանրակրթական հիմնական (ընդհանուր, մասնագիտացված եւ հատուկ) պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2-րդ, 5-րդ, 7-րդ դասարաններում 2023-2024 ուսումնական տարում ուսումնական գործընթացի կազմակերպման ուղեցույց

1. Սույն ուղեցույցում ներկայացվում է ուսումնական գործընթացի կազմակերպումը հանրակրթական հիմնական (ընդհանուր, մասնագիտացված եւ հատուկ) պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ Հաստատություն) 2-րդ, 5-րդ, 7-րդ դասարաններում:

2. Հաստատության 2-րդ, 5-րդ եւ 7-րդ դասարաններում ուսումնական գործընթացը կազմակերպվում է Հանրակրթության պետական չափորոշչի (ՀՀ կառավարության՝ 2021 թվականի փետրվարի 4-ի N 136-Ն որոշում) եւ առարկայական նոր չափորոշիչների ու ծրագրերի պահանջների հիման վրա:

3. 2023-2024 ուսումնական տարվա ուսումնական պարապմունքները 2-րդ, 5-րդ եւ 7-րդ, ինչպես նաեւ Հաստատության մյուս դասարաններում, **սկսելու, ավարտելու, ուսումնական պարապմունքների ընթացքում տրվող արձակուրդների ժամկետները** սահմանվում են Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի՝ 2023 թվականի հուլիսի 27-ի N 98-Ն հրամանով՝ *«Հանրակրթական հիմնական (ընդհանուր, մասնագիտացված եւ հատուկ) պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2023-2024 ուսումնական տարվա 1-ին, 3-րդ, 4-րդ, 6-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ եւ 12-րդ դասարանների օրինակելի ուսումնական պլանների»* (Հավելված 1-ի 1-ին եւ 2-րդ կետեր) պահանջների համաձայն:

Հայաստանի Հանրապետության հանրակրթական հիմնական (ընդհանուր, մասնագիտացված եւ հատուկ) պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2-րդ, 5-րդ, 7-րդ դասարանների ուսումնական պլանի ընդհանրական կառուցվածքը

1. Հաստատության 2023-2024 ուսումնական տարվա 2-րդ, 5-րդ, 7-րդ դասարանների ուսումնական պլանը (այսուհետ՝ Ուսումնական պլան) ունի երեք՝ պետական, դպրոցական եւ անհատական (ընտրովի) բաղադրիչ (հիմք՝ *«Հանրակրթության մասին»* ՀՀ օրենք, 7-րդ հոդված, 5-րդ մաս, ***տե՛ս՝ աղյուսակ 1***):

2. Հանրակրթական ուսումնական հաստատության ուսումնական պլանի պետական բաղադրիչը ներառում է՝ ըստ դասարանների պետական պարտադիր առարկայացանկը եւ առարկայացանկում ընդգրկված ուսումնական առարկաներին հատկացված պարտադիր նվազագույն ժամաքանակները (Հիմք՝ *«Հանրակրթության պետական չափորոշիչ»*, 23-րդ կետ):

3. Հաստատության 2-րդ, 5-րդ եւ 7-րդ դասարանների ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի տնօրինումը.

1) Դպրոցական բաղադրիչի ժամաքանակը հատկացվում է Ուսումնական պլանի պետական բաղադրիչով եւ Հաստատության կողմից սահմանված առարկաներին: Հաստատությունը կարող է սահմանել նոր առարկաներ (դասընթացներ)՝ դրանց ծրագրերը Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) կողմից հաստատվելուց հետո:

2) Դպրոցական բաղադրիչի ժամաքանակը հատկացվում է սովորողների նախասիրություններին, ուսումնական հաստատության առանձնահատկություններին, համայնքի կարիքներին համապատասխան կրթություն կազմակերպելու նպատակով:

*3) Նախարարության կողմից հաստատված ծրագրերով երաշխավորվող առարկաները (դասընթացները) տրված են «Հանրակրթական հիմնական (ընդհանուր, մասնագիտացված եւ հատուկ) պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2023-2024 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլաններում» (**Հավելված 1-ի 25-րդ կետի 3-րդ ենթակետ**):*

4) Հաստատության ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխումը կատարվում է մանկավարժական խորհրդի որոշմամբ՝ ելնելով Հաստատության, դասարանի պատրաստվածությունից, մանկավարժներով, ծրագրերով, դասագրքերով եւ երաշխավորված լրացուցիչ առարկայացանկի որեւէ առարկայի լիարժեք ուսուցման կազմակերպման նպատակով Նախարարության կողմից հանրակրթական ուսումնական հաստատությունների համար երաշխավորված այլ ուսումնական գրականությամբ ապահովվածությունից եւ ուսուցման կազմակերպման համար անհրաժեշտ այլ պայմաններից, ինչպես նաեւ Նախարարության հանձնարարականներից:

5) Դպրոցական բաղադրիչի ժամերը հատկացվում են հաշվի առնելով տվյալ դասարանում առարկայի դասավանդման համար պահանջվող տարեկան անհրաժեշտ ժամաքանակը: Պահանջը բխում է առարկայի տվյալ դասարանի թեմատիկ պլանից, որտեղ նշվում է, թե որ թեմայի դասավանդման համար քանի լրացուցիչ ժամ է պահանջվում:

6) 2-րդ, 5-րդ, 7-րդ դասարաններում դպրոցական բաղադրիչի ամբողջ ժամաքանակի բաշխումը պարտադիր է:

7) Դպրոցական բաղադրիչով սահմանված ժամաքանակի շրջանակում դասավանդվող առարկայացանկը ամրագրվում է Հաստատության ուսումնական պլանում եւ դասացուցակում:

4. Հաստատության 2-րդ, 5-րդ եւ 7-րդ դասարանների ուսումնական պլանի անհատական (ընտրովի) բաղադրիչի տնօրինումը:

1) Ուսումնական պլանի անհատական (ընտրովի) բաղադրիչի ժամերը հատկացվում են Հաստատության կողմից սահմանված ուսումնական խմբակներին եւ ուսումնական նախագծերին «Հանրակրթական ուսումնական հաստատություններում խմբակների գործունեության եւ ուսումնական նախագծերի իրականացման մեթոդական ուղեցույցի» եւ «Հանրակրթական ուսումնական հաստատության դպրոցական եւ անհատական բաղադրիչով սահմանված առարկաների ծրագրերի եւ խմբակների երաշխավորման կարգի» (Հիմք՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի՝ 2023 թվականի փետրվարի 24-ի N 301 Ա/2 եւ 2023 թվականի փետրվարի 24-ի N 09-Ն հրամաններ) պահանջների համաձայն:

2) Անհատական բաղադրիչի ժամերը հատկացվում են՝ հաշվի առնելով խմբակի կամ նախագծի իրականացման համար պահանջվող տարեկան ժամաքանակը:

3) Ուսումնական պլանի անհատական (ընտրովի) բաղադրիչի ժամաքանակից ժամեր են հատկացվում կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից երաշխավորված «Առողջ ապրելակերպ» ուսումնական խմբակին (5-րդ եւ 7-րդ դասարաններ):

4) Հաստատության 7-րդ դասարանում յուրաքանչյուր սովորող տարեկան իրականացնում է առնվազն մեկ ուսումնական նախագիծ՝ իր ընտրած առարկայից (առարկաներից):

5) Ուսումնական պլանի անհատական (ընտրովի) բաղադրիչով ուսումնական պարապմունքները կազմակերպվում են Ուսումնական պլանի պետական եւ դպրոցական բաղադրիչների ժամաքանակի շրջանակում իրականացվող ուսումնական պարապմունքներից հետո:

6) Ուսումնական պլանի պետական պարտադիր, դպրոցական եւ անհատական բաղադրիչներն ուղղված են Հանրակրթության պետական չափորոշչով, առարկայական չափորոշիչներով եւ ծրագրերով ամրագրված գիտելիքների, հմտությունների, դիրքորոշման եւ արժեքների ձեւավորմանը:

7) Սովորողների շաբաթական ծանրաբեռնվածությունը սահմանում է Հաստատությունը՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից սահմանված սանիտարական կանոնները եւ նորմերը:

Սովորողների օրական ուսումնական ծանրաբեռնվածության առավելագույն թույլատրելի նորմերը

Դասարաններ	Օրական առավելագույն թույլատրելի ուսումնական ծանրաբեռնվածության նորմեր
1	Օրական ոչ ավելի, քան 4 դաս, շաբաթը 1 անգամ 5 դաս՝ ֆիզկուլտուրայի դասի հաշվին
2-4	Օրական ոչ ավելի, քան 5 դաս, շաբաթը 1 անգամ 6 դաս՝ ֆիզկուլտուրայի դասի հաշվին
5-6	Օրական ոչ ավելի, քան 6 դաս
7-12	Օրական ոչ ավելի, քան 7 դաս

8) Ուսումնական պլանի անհատական (ընտրովի) բաղադրիչի ժամաքանակը Հաստատությունը բաշխում է ըստ կրթական աստիճանների եւ 7-րդ դասարանից սկսած՝ հաշվի առնելով յուրաքանչյուր սովորողի կողմից իրականացվող առնվազն մեկ ուսումնական նախագծի ուղղվածությունն ու բովանդակությունը:

5. Հանրակրթական ուսումնական հաստատությունը Ուսումնական պլանի պետական, դպրոցական եւ անհատական բաղադրիչներով սահմանված ժամաքանակի տնօրինմամբ կազմում է տվյալ ուսումնական տարվա իր ուսումնական պլանը:

6. 2-րդ, 5-րդ եւ 7-րդ դասարաններում սովորողների ուսումնառության արդյունքները արձանագրվում են *«Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշները սահմանելու մասին»* Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի 2023 թվականի փետրվարի 24-ի N 11-Ն հրամանի համաձայն:

7. 2-րդ դասարանում յուրաքանչյուր դասաժամի միջնամասում որոշակի ժամանակ հատկացվում է լիցքաթափող եւ վերականգնող վարժություններին ու խաղերին՝ Նախարարության մեթոդական ցուցումների համաձայն:

Ուսումնական գործընթացի կազմակերպման ընդհանուր սկզբունքներ

8. Հաստատության տարրական դպրոցի 2-րդ դասարանում *«Ռուսաց լեզու»*, 5-րդ եւ 7-րդ դասարաններում՝ *«Ռուսաց լեզու», «Օտար լեզու»*, ինչպես նաեւ 5-րդ եւ 7-րդ դասարաններում *«Հայոց լեզու»* եւ *«Թվային գրագիտություն եւ համակարգչային գիտություն (ԹԳՀԳ)»* (համակարգչային դասարանի առկայության դեպքում) առարկաների դասաժամերին դասարանը կարելի է բաժանել երկու խմբի, եթե սովորողների թիվը 20 եւ ավելի է:

9. *«Տեխնոլոգիա»* առարկայի (5-րդ դասարան) պարապմունքներին դասարանը կարելի է բաժանել երկու խմբի, եթե սովորողների թիվը 20 եւ ավելի է:

10. Դասարանը նույն կարգով կարելի է բաժանել երկու խմբի նաեւ Նախարարության երաշխավորած *«Գրաբար»* (7-րդ կամ 8-րդ դասարան) առարկայի պարապմունքների ժամանակ՝ դպրոցական բաղադրիչի ժամաքանակն այդ առարկային տրամադրելու դեպքում:

շարունակությունը էջ 6

Հայաստանի Հանրապետության հանրակրթական հիմնական (ընդհանուր, մասնագիտացված եւ հատուկ) պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2-րդ, 5-րդ, 7-րդ դասարաններում 2023-2024 ուսումնական տարում ուսումնական գործընթացի կազմակերպման ուղեցույց

սկիզբը՝ էջ 5

11. Անհրաժեշտության դեպքում Հաստատությունն իրավասու է ըստ կիսամյակների վերաբաշխելու առարկայի ուսուցմանը Ուսումնական պլանով հատկացված ժամերը՝ պահպանելով տվյալ առարկայի տարեկան ընդհանուր ժամաքանակը:

12. Հաստատության 2-րդ դասարանում առարկայացանկի ձեւավորման սկզբունքներն են.

1) մաթեմատիկան ներկայացվում է մեկ ինտեգրված առարկայով, ինչպես նաեւ մաթեմատիկական մտածողությունը, քննադատական մտածողությունը, կանխատեսումներ կատարելու ունակությունները շախմատ խաղի ուսուցման միջոցով զարգացնող առանձին առարկայով («Մաթեմատիկա», «Շախմատ» առարկաներ),

2) տեղեկատվական եւ հաղորդակցական տեխնոլոգիաների կրթությունը ներկայացվում է թվային սարքերից եւ ծրագրերից օգտվելու կարողություններ ձեւավորող առանձին կամ ինտեգրված ուսումնական առարկայով («Թվային գրագիտություն եւ համակարգչային գիտություն (ԹԳՀԳ)» առարկա),

3) տեխնոլոգիական (ճարտարագիտական) կրթությունը ներկայացվում է ինտեգրված ուսումնական առարկայով («Տեխնոլոգիա» առարկա),

4) ԲՏՃՄ բնագավառի բնագիտական բովանդակությունը, «Ֆիզիկական կրթություն եւ անվտանգ կենսագործունեություն», «Հայրենագիտությունե եւ «Հասարակություն, հասարակական գիտություններ» բնագավառները ներկայացվում են մարդուն եւ նրա շրջակա աշխարհն ուսումնասիրող մեկ ինտեգրված ուսումնական առարկայով («Ես եւ շրջակա աշխարհը» առարկա),

5) «Օտար լեզուներ» բնագավառը 2-րդ դասարանում ներկայացվում է միայն «Ռուսաց լեզու» առարկայով,

6) «Հայոց լեզու եւ գրականություն» բնագավառը ներկայացվում է հայոց լեզուն եւ գրականությունը ներկայացնող մեկ ինտեգրված առարկայով («Մայրենի» առարկա),

7) «Արվեստ եւ արհեստ» բնագավառը ներկայացվում է առանձին կամ ինտեգրված առարկաներով («Կերպարվեստ», «Երաժշտություն» առարկաներ, «Արվեստ» ինտեգրված առարկա, կամ հաստատության կողմից ընտրված այլ առարկա, որի ծրագիրը հաստատված է Նախարարության կողմից),

8) «Ֆիզիկական կրթություն եւ անվտանգ կենսագործունեություն» բնագավառը ներկայացվում է առանձին առարկաներով («Ֆիզկուլտուրա», «Ես եւ շրջակա աշխարհը» առարկաներ):

13. Հաստատության 5-րդ դասարանում առարկայացանկի ձեւավորման սկզբունքներն են.

1) ԲՏՃՄ բնագավառում՝

ա. բնագիտությունը ներկայացվում է մեկ ինտեգրված առարկայով («Բնություն» առարկա),

բ. մաթեմատիկան ներկայացվում է մեկ ինտեգրված առարկայով («Մաթեմատիկա»),

գ. տեղեկատվական եւ հաղորդակցական տեխնոլոգիաների կրթությունը ներկայացվում է թվային սարքերից եւ ծրագրերից օգտվելու կարողություններ ձեւավորող «ԹԳՀԳ» առարկայով,

դ. տեխնոլոգիական (ճարտարագիտական) կրթությունը ներկայացվում է ինտեգրված «Տեխնոլոգիա» ուսումնական առարկայով.

2) «Օտար լեզուներ» բնագավառը ներկայացվում է առնվազն երկու օտար լեզվով.

3) «Հայոց լեզու եւ գրականություն» բնագավառը ներկայացվում է հայոց լեզուն եւ գրականությունը ներկայացնող մեկ ինտեգրված առարկայով («Մայրենի» առարկա).

4) «Հայրենագիտություն» եւ «Հասարակություն, հասարակական գիտություններ» բնագավառները ներկայացվում են Հայաստանի եւ հայ ժողովրդի եւ համաշխարհային պատմությունը, մշակույթը ու կրոնը, աշխարհագրությունը, հասարակական կյանքի ոլորտները ներկայացնող մեկ ինտեգրված առարկայով (5-րդ դասարանում «Իմ հայրենիքը» առարկա).

5) «Արվեստ եւ արհեստ» բնագավառը ներկայացվում է առանձին կամ ինտեգրված առարկաներով («Կերպարվեստ», «Երաժշտություն» առարկաներ կամ «Արվեստ» ինտեգրված առարկա կամ հաստատության կողմից ընտրված այլ առարկա, որի ծրագիրը հաստատված է Նախարարության կողմից).

6) «Ֆիզիկական կրթություն եւ անվտանգ կենսագործունեություն» բնագավառը ներկայացվում է առանձին «Ֆիզկուլտուրա» առարկայով:

14. Հաստատության 7-րդ դասարանում առարկայացանկի ձեւավորման սկզբունքներն են.

1) ԲՏՃՄ բնագավառում՝

ա. բնագիտությունը ներկայացվում է առանձին բնագիտական առարկաներով («Ֆիզիկա», «Աշխարհագրություն», «Քիմիա», «Կենսաբանություն» առարկաներ).

բ. մաթեմատիկան ներկայացվում է առանձին մաթեմատիկական առարկաներով («Հանրահաշիվ», Երկրաչափություն» առարկաներ).

գ. տեղեկատվական եւ հաղորդակցական տեխնոլոգիաների կրթությունը ներկայացվում է կիրառական ծրագրերի ուսումնասիրության միջոցով կյանքի պահանջներին եւ ապագա կրթությանը, աշխատանքային գործունեությանը բավարարող համակարգչային անհրաժեշտ հմտություններ զարգացնող առանձին ուսումնական առարկայով («ԹԳՀԳ» առարկա).

2) «Օտար լեզուներ» բնագավառը ներկայացվում է առնվազն երկու օտար լեզվով.

3) «Հայոց լեզու եւ գրականություն» բնագավառը ներկայացվում է հայոց լեզուն եւ գրականությունը ուսումնասիրող առանձին առարկաներով («Հայոց լեզու», «Գրականություն» առարկաներ).

4) «Հայրենագիտություն» բնագավառը ներկայացվում է առանձին՝ «Հայոց պատմություն» առարկայով.

5) «Հասարակություն, հասարակական գիտություններ» բնագավառն ընդգրկում է համաշխարհային պատմությունը եւ հասարակական կյանքի ոլորտները ներկայացնող առանձին առարկաներ («Համաշխարհային պատմություն», «Հասարակագիտություն» առարկաներ).

6) «Արվեստ եւ արհեստ» բնագավառը ներկայացվում է առանձին կամ ինտեգրված առարկաներով («Կերպարվեստ», «Երաժշտություն» առարկաներ կամ «Արվեստ» ինտեգրված առարկա կամ հաստատության կողմից ընտրված այլ առարկա, որի ծրագիրը հաստատված է Նախարարության կողմից).

7) Հաստատության 7-րդ դասարանում «Կերպարվեստ» եւ «Երաժշտություն» առարկաներին հատկացված ժամաքանակը կարող է տրամադրվել «Արվեստ» ինտեգրված առարկային՝ առնվազն շաբաթական 1 ժամ ծավալով:

8) «Ֆիզիկական կրթություն եւ անվտանգ կենսագործունեություն» բնագավառը ներկայացվում է առանձին՝ «Ֆիզկուլտուրա» առարկայով:

15. Հաստատության 2-րդ, 5-րդ եւ 7-րդ դասարաններում օտար լեզվի ընտրությունը.

1) Հանրակրթական հիմնական պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2-րդ դասարանում դասավանդվում է մեկ օտար լեզու, իսկ 5-րդ եւ 7-րդ դասարաններում՝ երկու օտար լեզու: Այդ օտար լեզուներն են անգլերեն, ռուսերեն, ֆրանսերեն, գերմաներեն կամ Նախարարության կողմից երաշխավորված ծրագիր ունեցող այլ լեզուներ:

2) Հաստատության ընտրությամբ երրորդ օտար լեզու կարելի է դասավանդել ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամաքանակի հաշվին՝ 5-րդ եւ 7-րդ դասարաններում (շաբաթական 1,5 կամ 2 ժամ՝ պահպանելով հանրակրթության պետական չափորոշչի «Օտար լեզու» բնագավառին հատկացված առավելագույն տոկոսային մասնաբաժինը) Նախարարության կողմից հաստատված ծրագրերի, ուսումնական գրականության հիման վրա, ուսուցման համար անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում:

Աղյուսակ 1

Հաստատության 2-րդ, 5-րդ, 7-րդ դասարանների 2023-2024 ուսումնական տարվա ուսումնական պլանի նմուշ

Պետական պարտադիր առարկայացանկ	Դասարաններ, ուսումնական առարկաների պարտադիր նվազագույն ժամաքանակներ		
	II	V	VII
Մայրենի	7	6	-
Հայոց լեզու	-	-	2
Գրականություն	-	-	3
Իմ հայրենիքը	-	2	-
Հայոց պատմություն	-	-	3
Համաշխարհային պատմություն	-	-	2
Հասարակագիտություն	-	-	1
Ռուսաց լեզու	3	2	2
Օտար լեզու	-	3	3
Մաթեմատիկա	4	5	-
Հանրահաշիվ	-	-	3
Երկրաչափություն	-	-	2
Ես եւ շրջակա աշխարհը	1	-	-
Բնություն	-	2	-
Թվային գրագիտություն եւ համակարգչային գիտություն	1	1	1
Աշխարհագրություն	-	-	2
Ֆիզիկա	-	-	2
Քիմիա	-	-	2
Կենսաբանություն	-	-	2
Տեխնոլոգիա	2	2	-
Կերպարվեստ	2	1	0,5
Երաժշտություն	2	1	0,5
Ֆիզկուլտուրա	2	2	2
Շախմատ	1	-	-
ՆԶՊ	-	-	-
Դպրոցական բաղադրիչ	**1**	**3**	**2**
Ընդամենը	**26**	**30**	**35**
Անհատական (ընտրովի) բաղադրիչ	**2**	**6**	

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի հանրակրթական հիմնական (ընդհանուր, մասնագիտացված եւ հատուկ) պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների առարկայական չափորոշիչներ եւ ծրագրեր փորձարկող 1-12-րդ դասարաններում 2023-2024 ուսումնական տարում ուսումնական գործընթացի կազմակերպման ուղեցույց

Սույն ուղեցույցում ներկայացվում է Տավուշի մարզի հիմնական (ընդհանուր, մասնագիտացված եւ հատուկ) պետական առարկայական չափորոշիչներ եւ ծրագրեր փորձարկող ուսումնական հաստատությունների 1-12-րդ դասարաններում ուսումնական գործընթացի կազմակերպումը:

1. 2023-2024 ուսումնական տարվա ուսումնական պարապմունքները ՀՀ Տավուշի մարզի հիմնական (ընդհանուր, մասնագիտացված եւ հատուկ) պետական առարկայական չափորոշիչներ եւ ծրագրեր փորձարկող ուսումնական հաստատությունների 1-12-րդ դասարաններում ուսումնական պարապմունքները սկսելու, ավարտելու, ուսումնական պարապմունքների ընթացքում տրվող արձակուրդների ժամկետները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի՝ 2023 թվականի հուլիսի 27-ի N 98-Ն հրամանով՝ *«Հանրակրթական հիմնական (ընդհանուր, մասնագիտացված եւ հատուկ) պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2023-2024 ուսումնական տարվա 1-ին, 3-րդ, 4-րդ, 6-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ եւ 12-րդ դասարանների օրինակելի ուսումնական պլանների»* (Հավելված 1-ի, 1-ին եւ 2-րդ կետերի պահանջների համաձայն):

Տավուշի մարզի հիմնական (ընդհանուր, մասնագիտացված եւ հատուկ) պետական առարկայական չափորոշիչներ եւ ծրագրեր փորձարկող ուսումնական հաստատությունների 1-12-րդ դասարանների ուսումնական պլանի ընդհանրական կառուցվածքը

2. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի հանրակրթական հիմնական (ընդհանուր, մասնագիտացված եւ հատուկ) պետական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության առարկայական չափորոշիչներ եւ ծրագրեր փորձարկող 1-12-րդ դասարանների (այսուհետ՝ Փորձարկող դասարաններ) 2023-2024 ուսումնական տարվա ուսումնական պլանը (այսուհետ՝ Ուսումնական պլան) ունի երեք՝ **պետական, դպրոցական եւ անհատական (ընտրովի)** բաղադրիչ (հիմք՝ *«Հանրակրթության մասին»* ՀՀ օրենք, 7-րդ հոդված, 5-րդ մաս, ***տե՛ս՝ աղյուսակ 1***):

3. Հանրակրթական ուսումնական հաստատության ուսումնական պլանի պետական բաղադրիչը ներառում է ըստ դասարանների պետական պարտադիր առարկայացանկը եւ առարկայացանկում ընդգրկված ուսումնական առարկաներին հատկացված պարտադիր նվազագույն ժամաքանակները (հիմք՝ *«Հանրակրթության պետական չափորոշիչ»*, 23-րդ կետ):

4. Տավուշի մարզի հիմնական (ընդհանուր, մասնագիտացված եւ հատուկ) պետական առարկայական չափորոշիչներ եւ ծրագրեր փորձարկող ուսումնական հաստատությունների 1-12-րդ դասարանների ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի տնօրինումը.

1) Դպրոցական բաղադրիչի ժամաքանակը հատկացվում է ուսումնական հաստատության կողմից ուսումնական պլանի պետական բաղադրիչով եւ Հաստատության կողմից սահմանված առարկաներին: Հաստատությունը կարող է սահմանել նոր առարկաներ (դասընթացներ)՝ դրանց ծրագրերը Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) կողմից հաստատվելուց հետո:

2) Դպրոցական բաղադրիչի ժամաքանակը հատկացվում է սովորողների նախասիրություններին, ուսումնական հաստատության առանձնահատկություններին, համայնքի կարիքներին համապատասխան կրթություն կազմակերպելու նպատակով:

*3) Նախարարության կողմից հաստատված ծրագրերով երաշխավորվող առարկաները (դասընթացները) տրված են «Հանրակրթական հիմնական (ընդհանուր, մասնագիտացված եւ հատուկ) պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2023-2024 ուսումնական տարվա 1-ին, 3-րդ, 4-րդ, 6-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ եւ 12-րդ դասարանների օրինակելի ուսումնական պլաններում» (**Հավելված 1-ի 25-րդ կետի 3-րդ ենթակետ**):*

4) Հաստատության ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխումը կատարվում է մանկավարժական խորհրդի որոշմամբ՝ ելնելով Հաստատության, դասարանի պատրաստվածությունից, մանկավարժներով, ծրագրերով, դասագրքերով եւ երաշխավորված լրացուցիչ առարկայացանկի որեւէ առարկայի լիարժեք ուսուցման կազմակերպման նպատակով Նախարարության կողմից հանրակրթական ուսումնական հաստատությունների համար երաշխավորված այլ ուսումնական գրականությամբ ապահովվածությունից եւ ուսուցման կազմակերպման համար անհրաժեշտ այլ պայմաններից, ինչպես նաեւ Նախարարության հանձնարարականներից:

5) Հիմնական դպրոցում (1-9-րդ դասարաններ) դպրոցական բաղադրիչի ամբողջ ժամաքանակի բաշխումը պարտադիր է:

6) Հաստատության 10-12-րդ դասարաններից յուրաքանչյուրում Ուսումնական պլանի պետական եւ դպրոցական բաղադրիչների տնօրինմամբ յուրաքանչյուր սովորողի համար սահմանվում է շաբաթական 28-33 ժամ պարտադիր ուսումնական ծանրաբեռնվածություն:

7) Դպրոցական բաղադրիչով սահմանված ժամաքանակի շրջանակում դասավանդվող առարկայացանկը ամրագրվում է Հաստատության ուսումնական պլանում եւ դասացուցակում:

5. Տավուշի մարզի հիմնական (ընդհանուր, մասնագիտացված եւ հատուկ) պետական առարկայական չափորոշիչներ եւ ծրագրեր փորձարկող ուսումնական հաստատությունների 1-12-րդ դասարանների ուսումնական պլանի անհատական (ընտրովի) բաղադրիչի տնօրինումը.

1) Ուսումնական պլանի անհատական (ընտրովի) բաղադրիչի ժամերը հատկացվում են Հաստատության կողմից սահմանված ուսումնական խմբակներին եւ ուսումնական նախագծերին «Հանրակրթական ուսումնական հաստատություններում խմբակների գործունեության եւ ուսումնական նախագծերի իրականացման մեթոդական ուղեցույցի» եւ «Հանրակրթական ուսումնական հաստատության դպրոցական եւ անհատական բաղադրիչով սահմանված առարկաների ծրագրերի եւ խմբակների երաշխավորման կարգի» (Հիմք՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի՝ 2023 թվականի փետրվարի 24-ի N 301 Ա/2 եւ 2023 թվականի փետրվարի 24-ի N 09-Ն հրամաններ) պահանջների համաձայն:

2) Փորձարկող դասարաններում Ուսումնական պլանի անհատական (ընտրովի) բաղադրիչի ժամաքանակից ժամեր են հատկացվում կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից երաշխավորված ուսումնական խմբակներին՝ 5-11-րդ դասարաններում՝ «Առողջ ապրելակերպ», 8-11-րդ դասարաններում՝ «Մասնագիտական կողմնորոշման ակումբներ» դասընթացների, 10-11-րդ դասարաններում՝ ռազմամարզական ճամբարներում՝ ՆԶՊ-ի ուսուցմանը:

3) Հաստատության 7-12-րդ դասարաններում յուրաքանչյուր սովորող տարեկան իրականացնում է առնվազն մեկ ուսումնական նախագիծ՝ իր ընտրած առարկայից (առարկաներից):

4) Ուսումնական պլանի անհատական (ընտրովի) բաղադրիչով ուսումնական պարապմունքները կազմակերպվում են Ուսումնական պլանի պետական եւ դպրոցական բաղադրիչների ժամաքանակի շրջանակում իրականացվող ուսումնական պարապմունքներից հետո:

5) Ուսումնական պլանի պետական պարտադիր, դպրոցական եւ անհատական բաղադրիչներն ուղղված են Հանրակրթության պետական չափորոշչով, առարկայական չափորոշիչներով եւ ծրագրերով ամրագրված գիտելիքների, հմտությունների, դիրքորոշման եւ արժեքների ձեւավորմանը:

6) Սովորողների շաբաթական ծանրաբեռնվածությունը սահմանում է Հաստատությունը՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից սահմանված սանիտարական կանոնները եւ նորմերը:

Սովորողների օրական ուսումնական ծանրաբեռնվածության առավելագույն թույլատրելի նորմերը

Դասարաններ	Օրական առավելագույն թույլատրելի ուսումնական ծանրաբեռնվածության նորմեր
1	Օրական ոչ ավելի, քան 4 դաս, շաբաթը 1 անգամ 5 դաս՝ ֆիզկուլտուրայի դասի հաշվին
2-4	Օրական ոչ ավելի, քան 5 դաս, շաբաթը 1 անգամ 6 դաս՝ ֆիզկուլտուրայի դասի հաշվին
5-6	Օրական ոչ ավելի, քան 6 դաս
7-12	Օրական ոչ ավելի, քան 7 դաս

7) Ուսումնական պլանի անհատական (ընտրովի) բաղադրիչի ժամաքանակը Հաստատությունը բաշխում է ըստ դասարանների՝ հաշվի առնելով Նախարարության կողմից հաստատված խմբակների ծրագրերի առկայությունը՝ ըստ կրթական աստիճանների եւ 7-րդ դասարանից սկսած՝ հաշվի առնելով յուրաքանչյուր սովորողի կողմից իրականացվող առնվազն մեկ ուսումնական նախագծի ուղղվածությունն ու բովանդակությունը:

6. Հանրակրթական ուսումնական հաստատությունը Ուսումնական պլանի պետական, դպրոցական եւ անհատական բաղադրիչներով սահմանված ժամաքանակի տնօրինմամբ կազմում է տվյալ ուսումնական տարվա իր ուսումնական պլանը:

7. Փորձարկող դասարաններում սովորողների ուսումնառության արդյունքները արձանագրվում են *«Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշները սահմանելու մասին»* ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի՝ 2023 թվականի փետրվարի 24-ի N 11-Ն հրամանի համաձայն:

8. Ուսումնական տարին բաժանվում է կիսամյակների: Հաստատությունում խմբային ուսուցման կազմակերպման հիմնական ձեւը դասն է: Դասի (մեկ ակադեմիական դասաժամի) տեւողությունը 45 րոպե է: Դասերի սկիզբը եւ դասամիջոցների տեւողությունը սահմանում է ուսումնական հաստատությունը՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի՝ 2017 թվականի մարտի 28-ի N 12-Ն հրամանի 77-րդ կետի պահանջները:

9. Տարրական դպրոցում յուրաքանչյուր դասաժամի միջնամասում որոշակի ժամանակ հատկացվում է լիցքաթափող եւ վերականգնող վարժություններին ու խաղերին՝ մեթոդական ցուցումների համաձայն:

շարունակությունը էջ 8

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի հանրակրթական հիմնական (ընդհանուր, մասնագիտացված եւ հատուկ) պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների առարկայական չափորոշիչներ եւ ծրագրեր փորձարկող 1-12-րդ դասարաններում 2023-2024 ուսումնական տարում ուսումնական գործընթացի կազմակերպման ուղեցույց

սկիզբը՝ էջ 7

Ուսումնական գործընթացի կազմակերպման ընդհանուր սկզբունքներ

10. Հաստատության տարրական դպրոցի 2-րդ դասարանում *«Ռուսաց լեզու»*, 3-12-րդ դասարաններում՝ *«Ռուսաց լեզու»* եւ *«Օտար լեզու»*, ինչպես նաեւ միջին դպրոցի 5-9-րդ եւ ավագ դպրոցի 10-12-րդ դասարաններում *«Հայոց լեզու»* եւ *«Թվային գրագիտություն եւ համակարգչային գիտություն (ԹԳՀԳ)»* (համակարգչային դասարանի առկայության դեպքում) առարկաների դասաժամերին դասարանը կարելի է բաժանել երկու խմբի, եթե սովորողների թիվը 20 եւ ավելի է:

1) «Տեխնոլոգիա» առարկայի (5-6-րդ դասարաններ) պարապմունքներին դասարանը կարելի է բաժանել երկու խմբի, եթե սովորողների թիվը 20 եւ ավելի է:

2) Դասարանը նույն կարգով կարելի է բաժանել երկու խմբի նաեւ Նախարարության երաշխավորած «Գրաբար» (7-րդ կամ 8-րդ, 11-րդ դասարաններ) առարկայի պարապմունքների ժամանակ՝ դպրոցական բաղադրիչի ժամաքանակն այդ առարկային տրամադրելու դեպքում:

3) Անհրաժեշտության դեպքում Հաստատությունն իրավասու է ըստ կիսամյակների վերաբաշխելու առարկայի ուսուցմանը Ուսումնական պլանով հատկացված ժամերը՝ պահպանելով տվյալ առարկայի տարեկան ընդհանուր ժամաքանակը:

11. Հաստատության 1-4-րդ դասարաններում առարկայացանկի ձեւավորման սկզբունքներն են.

1) մաթեմատիկան ներկայացվում է մեկ ինտեգրված առարկայով, ինչպես նաեւ մաթեմատիկական մտածողությունը, քննադատական մտածողությունը, կանխատեսումներ կատարելու ունակությունները շախմատ խաղի ուսուցման միջոցով զարգացնող առանձին առարկայով («Մաթեմատիկա», «Շախմատ» առարկաներ),

2) տեղեկատվական եւ հաղորդակցական տեխնոլոգիաների կրթությունը ներկայացվում է թվային սարքերից եւ ծրագրերից օգտվելու կարողություններ ձեւավորող առանձին կամ ինտեգրված ուսումնական առարկայով («Թվային գրագիտություն եւ համակարգչային գիտություն (ԹԳՀԳ)» առարկա),

3) տեխնոլոգիական (ճարտարագիտական) կրթությունը ներկայացվում է ինտեգրված ուսումնական առարկայով («Տեխնոլոգիա» առարկա),

4) բնագիտության, տեղեկատվական հաղորդակցական տեխնիոլոգիաների, ճարտարագիտության, մաթեմատիկայի (ԲՏՃՄ) բնագավառի բնագիտական բովանդակությունը, «Ֆիզիկական կրթություն եւ անվտանգ կենսագործունեություն», «Հայրենագիտություն» եւ «Հասարակություն, հասարակական գիտություններ» բնագավառները ներկայացվում են մարդուն եւ նրա շրջակա աշխարհն ուսումնասիրող մեկ ինտեգրված ուսումնական առարկայով («Ես եւ շրջակա աշխարհը» առարկա),

5) «Օտար լեզուներ» բնագավառը 2-րդ դասարանում ներկայացվում է միայն «Ռուսաց լեզու» առարկայով, իսկ 3-րդ դասարանում երկու օտար լեզվով, որից մեկը «Ռուսաց լեզու» է,

6) 1-4-րդ դասարաններում «Հայոց լեզու եւ գրականություն» բնագավառը ներկայացվում է հայոց լեզուն եւ գրականությունը ներկայացնող մեկ ինտեգրված առարկայով («Մայրենի» առարկա),

7) «Արվեստ եւ արհեստ» բնագավառը ներկայացվում է առանձին կամ ինտեգրված առարկաներով («Կերպարվեստ», «Երաժշտություն» առարկաներ, «Արվեստ» ինտեգրված առարկա, կամ հաստատության կողմից ընտրված այլ առարկա, որի ծրագիրը հաստատված է Նախարարության կողմից),

8) «Ֆիզիկական կրթություն եւ անվտանգ կենսագործունեություն» բնագավառը ներկայացվում է առանձին առարկաներով («Ֆիզկուլտուրա», «Ես եւ շրջակա աշխարհը» առարկաներ):

12. Հաստատության 5-6-րդ դասարաններում առարկայացանկի ձեւավորման սկզբունքներն են.

1) ԲՏՃՄ բնագավառում՝

ա. բնագիտությունը ներկայացվում է մեկ ինտեգրված առարկայով («Բնություն» առարկա),

բ. մաթեմատիկան ներկայացվում է մեկ ինտեգրված առարկայով («Մաթեմատիկա»),

գ. տեղեկատվական եւ հաղորդակցական տեխնոլոգիաների կրթությունը ներկայացվում է թվային սարքերից եւ ծրագրերից օգտվելու կարողություններ ձեւավորող «ԹԳՀԳ» առարկայով,

դ. տեխնոլոգիական (ճարտարագիտական) կրթությունը ինտեգրված «Տեխնոլոգիա» ուսումնական առարկայով.

2) «Օտար լեզուներ» բնագավառը ներկայացվում է առնվազն երկու օտար լեզվով.

3) «Հայոց լեզու եւ գրականություն» բնագավառը ներկայացվում է հայոց լեզուն եւ գրականությունը ներկայացնող մեկ ինտեգրված առարկայով («Մայրենի» առարկա).

4) «Հայրենագիտություն» եւ «Հասարակություն, հասարակական գիտություններ» բնագավառները ներկայացվում են Հայաստանի եւ հայ ժողովրդի եւ համաշխարհային պատմությունը, մշակույթը ու կրոնը, աշխարհագրությունը, հասարակական կյանքի ոլորտները ներկայացնող մեկ ինտեգրված առարկայով (5-րդ դասարանում «Իմ հայրենիքը», իսկ 6-րդ դասարանում՝ «Իմ հայրենիքն ու աշխարհը» առարկաներ).

5) «Արվեստ եւ արհեստ» բնագավառը ներկայացվում է առանձին կամ ինտեգրված առարկաներով («Կերպարվեստ», «Երաժշտություն» առարկաներ կամ «Արվեստ» ինտեգրված առարկա կամ հաստատության կողմից ընտրված այլ առարկա, որի ծրագիրը հաստատված է Նախարարության կողմից).

6) «Ֆիզիկական կրթություն եւ անվտանգ կենսագործունեություն» բնագավառը ներկայացվում է առանձին «Ֆիզկուլտուրա» առարկայով:

13. Հաստատության 7-9-րդ դասարաններում առարկայացանկի ձեւավորման սկզբունքներն են.

1) ԲՏՃՄ բնագավառում՝

ա. բնագիտությունը ներկայացվում է առանձին բնագիտական առարկաներով («Ֆիզիկա», «Աշխարհագրություն», «Հայաստանի աշխարհագրություն», «Քիմիա», «Կենսաբանություն» առարկաներ).

բ. մաթեմատիկան ներկայացվում է առանձին մաթեմատիկական առարկաներով («Հանրահաշիվ», «Երկրաչափություն» առարկաներ).

գ. տեղեկատվական եւ հաղորդակցական տեխնոլոգիաների կրթությունը ներկայացվում է կիրառական ծրագրերի ուսումնասիրության միջոցով կյանքի պահանջներին եւ ապագա կրթությանը, աշխատանքային գործունեությանը բավարարող համակարգչային անհրաժեշտ հմտություններ զարգացնող առանձին ուսումնական առարկայով («ԹԳՀԳ» առարկա).

2) «Օտար լեզուներ» բնագավառը ներկայացվում է առնվազն երկու օտար լեզվով.

3) «Հայոց լեզու եւ գրականություն» բնագավառը ներկայացվում է հայոց լեզուն եւ գրականությունը ուսումնասիրող առանձին առարկաներով («Հայոց լեզու», «Գրականություն» առարկաներ).

4) «Հայրենագիտություն» բնագավառը ներկայացվում է առանձին՝ «Հայոց պատմություն» առարկայով.

5) «Հասարակություն, հասարակական գիտություններ» բնագավառն ընդգրկում է համաշխարհային պատմությունը եւ հասարակական կյանքի ոլորտները ներկայացնող առանձին առարկաներ («Համաշխարհային պատմություն», «Հասարակագիտություն» առարկաներ).

6) «Արվեստ եւ արհեստ» բնագավառը ներկայացվում է առանձին կամ ինտեգրված առարկաներով («Կերպարվեստ», «Երաժշտություն» առարկաներ, կամ «Արվեստ» ինտեգրված առարկա կամ հաստատության կողմից ընտրված այլ առարկա, որի ծրագիրը հաստատված է Նախարարության կողմից).

7) Հաստատության 7-9-րդ դասարաններում «Կերպարվեստ» եւ «Երաժշտություն» առարկաներին հատկացված ժամաքանակը կարող է տրամադրվել «Արվեստ» ինտեգրված առարկային՝ առնվազն շաբաթական 1 ժամ ծավալով:

8) «Ֆիզիկական կրթություն եւ անվտանգ կենսագործունեություն» բնագավառը ներկայացվում է առանձին առարկաներով («ՆԶՊ», «Ֆիզկուլտուրա»):

14. Ուսումնական գործընթացի կազմակերպումը 10-12-րդ դասարաններում:

1) Հաստատության 10-12-րդ դասարանները տվյալ ուսումնական առարկան նույն ծրագրով ուսումնասիրող սովորողներից կազմված ուսումնական խմբեր են:

2) Միջնակարգ դպրոցի ավագ դասարանների եւ առանձին գործող ավագ դպրոցի դասարանների ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչը հատկացվում է պետական բաղադրիչով կամ Հաստատության կողմից սահմանված առարկաներին:

3) Ուսումնական առարկան Հիմնական կամ Նպատակային ծրագրերով ուսումնասիրել ցանկացող սովորողներից ձեւավորվում են առանձին ուսումնական խմբեր: 10-12-րդ դասարաններում ուսումնական խմբում սովորողների թիվը սահմանվում է «Հայաստանի Հանրապետության հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատության դասարանների կազմավորման կարգի» պահանջներին համապատասխան:

4) Հաստատության 10-12-րդ դասարաններում ուսուցումն իրականացվում է Հիմնական եւ Նպատակային առարկայական ծրագրերով, որոնց համապատասխան ձեւավորվում են ուսումնական խմբեր:

5) Հաստատության 10-12-րդ դասարանների եւ առանձին գործող ավագ դպրոցի 10-12-րդ դասարանների սովորողը առարկան կարող է ուսումնասիրել տվյալ ուսումնական առարկայի Հիմնական կամ Նպատակային առարկայական ծրագրով: Այդ դեպքում սովորողը Հաստատության կողմից ընդգրկվում է այդ ծրագիրն ուսումնասիրող առարկայական խմբում:

6) Հաստատության 10-12-րդ դասարանների այն սովորողը, որը պետական բաղադրիչով տրված առարկան ուսումնասիրում է Նպատակային ծրագրով, նույն առարկան Հիմնական ծրագրով չի ուսումնասիրում:

7) Հաստատության 10-12-րդ դասարաններում ֆիզիկամաթեմատիկական առարկաներ ընտրելու դեպքում սովորողը Նպատակային ծրագրերով կարող է ընտրել մինչեւ երեք առարկա («Ֆիզիկա», «Հանրահաշիվ», «Երկրաչափություն»):

8) Հաստատության 10-12-րդ դասարաններում բնագիտական առարկաներ ընտրելու դեպքում սովորողը նպատակային ծրագրերով կարող է ընտրել «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն» առարկաներից ցանկացած երկուսը:

15. Այն սովորողները, որոնք Հաստատության 10-12-րդ դասարաններում Նպատակային ծրագրերով ուսումնասիրում են հայագիտական, հասարակագիտական առարկաներ կամ օտար լեզուներ, 10-12-րդ դասարաններում *«Բնագիտություն, տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաներ, ճարտարագիտություն, մաթեմատիկա»* (ԲՏՃՄ) ուսումնական բնագավառի բնագիտական առարկաներից ուսումնասիրում են միայն *«Բնագիտություն»* ինտեգրված ուսումնական առարկան:

16. Այն դեպքում, երբ Հաստատության 10-12-րդ դասարաններում ուսումնական պլանի պետական բաղադրիչի *«Հայոց լեզու», «Հայ գրականություն», «Հայոց պատմություն», «Օտար լեզու»* եւ այլ ուսումնական առարկաների Հիմնական կամ Նպատակային ծրագրեր ընտրած սովորողներից ձեւավորված խմբերի թվաքանակը չի գերազանցում *«Հայաստանի Հանրապետության հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատության դասարանների կազմավորման կարգով»* սահմանված սովորողների թվաքանակը, կարող է կազմվել մեկ ուսումնական խումբ երկհամակազմ դասարանի ձեւավորման սկզբունքով, որն ուսումնասիրում է նույն առարկան տարբեր ժամաքանակներով:

շարունակությունը էջ 9

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի հանրակրթական հիմնական (ընդհանուր, մասնագիտացված եւ հատուկ) պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների առարկայական չափորոշիչներ եւ ծրագրեր փորձարկող 1-12-րդ դասարաններում 2023-2024 ուսումնական տարում ուսումնական գործընթացի կազմակերպման ուղեցույց

սկիզբը՝ էջ 8

17. Տավուշի մարզի հիմնական (ընդհանուր, մասնագիտացված եւ հատուկ) պետական առարկայական չափորոշիչներ եւ ծրագրեր փորձարկող ուսումնական հաստատությունների 1-12-րդ դասարաններում օտար լեզվի ընտրությունը.

1) Հանրակրթական հիմնական պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2-րդ դասարանում դասավանդվում է մեկ օտար լեզու, իսկ 3-12-րդ դասարաններում՝ երկու օտար լեզու: Այդ օտար լեզուներն են անգլերեն, ռուսերեն, ֆրանսերեն, գերմաներեն կամ Նախարարության կողմից երաշխավորված ծրագիր ունեցող այլ լեզուներ:

2) Հաստատության ընտրությամբ երրորդ օտար լեզու կարելի է դասավանդել ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամաքանակի հաշվին՝ 5-9-րդ դասարաններում (շաբաթական 1,5 կամ 2 ժամ, 10-12 դասարաններում՝ 2 ժամ՝ պահպանելով Հանրակրթության պետական չափորոշչի «Օտար լեզու» բնագավառին հատկացված առավելագույն տոկոսային մասնաբաժինը) Նախարարության կողմից հաստատված ծրագրերի, ուսումնական գրականության հիման վրա, ուսուցման համար անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում:

Աղյուսակ 1

Հաստատության առարկայական չափորոշիչներ եւ ծրագրեր փորձարկող դասարանների ուսումնական պլանի նմուշ

Պետական պարտադիր առարկայացանկ	Դասարաններ, ուսումնական առարկաների պարտադիր նվազագույն ժամաքանակներ											
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
Մայրենի	7	7	7	7	6	6	-	-	-	-	-	-
Հայոց լեզու	-	-	-	-	-	-	2	2	2	2	2	2
Գրականություն	-	-	-	-	-	-	3	3	3	-	-	-
Հայ գրականություն	-	-	-	-	-	-	-	-	-	3	3	3
Իմ հայրենիքը	-	-	-	-	2	-	-	-	-	-	-	-
Իմ հայրենիքն ու աշխարհը	-	-	-	-	-	2	-	-	-	-	-	-
Հայոց պատմություն	-	-	-	-	-	-	3	3	3	3	3	3
Համաշխարհային պատմություն	-	-	-	-	-	-	2	2	2	-	-	-
Հասարակագիտություն	-	-	-	-	-	-	1	1	1	2	2	2
Ռուսաց լեզու	-	3	2	2	2	2	2	2	2	-	-	-
Օտար լեզու	-	-	2	2	3	3	3	2	2	2	2	2
Մաթեմատիկա	4	4	4	4	5	5	-	-	-	-	-	-
Հանրահաշիվ	-	-	-	-	-	-	3	3	3	2	2	2
Երկրաչափություն	-	-	-	-	-	-	2	2	2	1	1	1
Ես եւ շրջակա աշխարհը	-	1	1	2	-	-	-	-	-	-	-	-
Բնություն	-	-	-	-	2	2	-	-	-	-	-	-
Բնագիտություն	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Թվային գրագիտություն եւ համակարգչային գիտություն	-	1	1	1	1	1	1	1	1	-	-	-
Աշխարհագրություն	-	-	-	-	-	-	2	2	-	-	-	-
Հայաստանի աշխարհագրություն	-	-	-	-	-	-	-	-	2	-	-	-
Ֆիզիկա	-	-	-	-	-	-	2	2	2	-	-	-
Քիմիա	-	-	-	-	-	-	2	2	2	-	-	-
Կենսաբանություն	-	-	-	-	-	-	2	2	2	-	-	-
Տեխնոլոգիա	2	2	1	1	2	2	-	-	-	-	-	-
Կերպարվեստ	2	2	1	1	1	1	0,5	0,5	0,5	-	-	-
Արվեստ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Երաժշտություն	2	2	1	1	1	1	0,5	0,5	0,5	-	-	-
Ֆիզկուլտուրա	2	2	2	2	2	2	2	2	2	2	2	2
Շախմատ	-	1	1	1	-	-	-	-	-	-	-	-
ՆԶՊ	-	-	-	-	-	-	-	1	1	1	1	1
Դպրոցական բաղադրիչ	**2**	**1**	**3**	**2**	**3**	**3**	**2**	**2**	**2**	**15**	**15**	**15**
Ընդամենը	**21**	**26**	**26**	**26**	**30**	**30**	**35**	**35**	**35**	**33**	**33**	**33**
Անհատական (ընտրովի) բաղադրիչի	**6**				**15**					**18**		

Մայր Աթոռ

Նշվեց Սուրբ Աստվածածնի Վերափոխման տոնը

Օգոստոսի 13-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին նշեց Սուրբ Մարիամ Աստվածածնի Վերափոխման տոնը:

Բերկրառատ Տոնի առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանությունը Սուրբ Գայանե վանքում մասնակցեց Պատարագի սրբազան արարողությանը: Պատարագիչն էր Մայր Աթոռի Եկեղեցական Հայեցակարգային բաժնի տնօրեն Գերաշնորհ Տեր Վազգեն արքեպիսկոպոս Միրզախանյանը:

Ներկայացնելով տոնի խորհուրդը՝ պատարագիչ Սրբազանը մասնավորապես ընդգծեց. *«Աստվածամոր վերափոխումը մենք տոնում ենք իբրեւ գալիք այն իրողության եւս մեկ հաստատում, որ մենք էլ պիտի հարություն առնենք եւ Աստվածամոր օրինակով հաղթահարենք մահը»:*

Վերջում Վազգեն Սրբազանը, եւս մեկ անգամ աղոթք վերառաքելով առ Աստված, դիմեց ներկա հավատացյալներին՝ նշելով. *«Սիրելի հավատացյալնե՛ր, շնորհավորելով բոլորիս տոնի առիթով, միանում եմ ամենքիդ աղոթքներին եւ խնդրում Աստվածամոր բարեխոսությունը մեր ազգի, Հայաստան եւ Արցախ աշխարհների համար, մեր բանակի, մեր ժողովրդի փրկության համար»*:

Սուրբ Պատարագի ավարտից հետո եկեղեցական թափորը Սուրբ Գայանե վանքից ուղղվեց դեպի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Սուրբ Տրդատի բաց խորան, որտեղ, հանդիսապետությամբ Մայր Աթոռի Լուսարարապետ Գերաշնորհ Տեր Մուշեղ եպիսկոպոս Բաբայանի, կատարվեց *«Խաղողօրհնեքի»* հանդիսավոր կարգը: Օրհնված խաղողի ողկույզները բաժանվեցին հավատավոր ժողովրդին:



Վերափոխումն Սուրբ Աստվածածնի (Խաղողօրհնեք)

սկիզբը՝ էջ 1



Ճանապարհի հրաշքը

Երբ հանդիսավոր թափորը, սուրբ առաքյալների ու մյուս հավատացյալների ուղեկցությամբ, վառվող մոմերի, օրհներգությունների ներքո մահիճը տանում էր դեպի Գեթսեմանի, հանկարծ երկնքում՝ ներկաների անմիջապես գլխավերեւում, մի ընդարձակ, լուսափայլ ու պսակաձեւ ամպ գոյացավ եւ սկսեց ուղեկցել թափորին:

Երուսաղեմի անհավատ բնակիչները, թաղման թափորի անսովոր փառահեղությամբ զարմացած եւ հատկապես չարացած **Հիսուսի** մորը տրված մեծարանքի հանդեպ, այդ ամենի մասին հայտնեցին հրեա քահանայապետերին ու դպիրներին: Վերջիններս, **Քրիստոսին** հիշեցնող ամեն ինչի նկատմամբ զայրույթով ու վրեժխնդրությամբ համակված, անմիջապես իրենց ծառաներին ու զինվորներին ուղարկեցին՝ ցրելու թափորն ուղեկցողներին:

Հուզված ու գրգռված ժողովուրդը եւ զինվորները նետվեցին քրիստոնյաների կողմը, բայց այդ պահին պսակաձեւ ամպն իջավ ներքեւ ու կարծես պատնեշի նման շրջապատեց թափորը: Չնայած հետապնդողներին լսելի էին երգերն ու քայլերի ձայները, բայց ոչինչ տեսանելի չէր, եւ նրանցից շատերը կուրացան: Կուրացածներն **Աստվածամոր** մահճին զղջումով դիպչելուց հետո վերստացան իրենց մարմնավոր տեսողությունը:

Ըստ ավանդության՝ այդ օրը մեկ այլ հրաշք եւս կատարվեց:

Այն ճանապարհով, որով անցնում էր հանդիսավոր թափորը, մի հրեա քահանա էր գնում: Երբ լուսակիր ամպը կրկին վերեւում էր, վերջինս հստակորեն տեսավ առաքյալներին ու մյուս ուղեկցողներին, նրա մեջ արթնացավ **Քրիստոսի** հանդեպ ունեցած նախկին չարությունը, եւ նա նետվեց մահճի վրա՝ այն գետին տապալելու դիտավորությամբ: Սակայն հազիվ էր դիպել ձեռքերով, երբ հանկարծ հրեշտակն աննյութեղեն թրով հատեց նրա երկու ձեռքերը: Կտրված մասերը մնացին մահճին կպած, իսկ ինքն աղաղակով գետին տապալվեց՝ խորապես զղջալով իր խոսքերի եւ գործածի համար: Ուստի **Պետրոս** առաքյալը կարգադրեց նրան մոտենալ կտրված ձեռքերին: Բժշկվելուց հետո նա եւս միացավ թափորին, իսկ հետագայում դարձավ **Քրիստոսի** հետեւորդներից մեկը:

Գեթսեմանիի պարտեզում

Այսպես Գեթսեմանի հասնելով՝ **Սուրբ Կույսի** մարմինն ամփոփեցին քարայրում եւ մուտքը մի հսկա քարով ծածկեցին: Առաքյալները եւ մյուս հավատացյալները չէին հեռանում **Աստվածամոր** գերեզմանից շուրջ երեք օր եւ անընդմեջ աղոթում էին: Այդ ամբողջ ընթացքում չէր դադարում հրեշտակների երգը:

Եվ միայն երրորդ օրը Գեթսեմանի եկավ **Բարդուղիմեոս** առաքյալը եւ սկսեց հուսակտուր ողբալ ու լաց լինել, որ չարժանացավ **Սուրբ Աստվածածնին** վերջին հրաժեշտը տալուն եւ Նրանից օրհնություն ստանալուն: Կարեկցանքից դրդված՝ առաքյալները որոշեցին բացել քարայրի մուտքը, որպեսզի նա կարողանա վերջին հրաժեշտը տալ: Բայց մուտքից քարը հեռացնելուց հետո բոլորը տեսան եւ հաստատեցին, որ **Աստվածամոր** մարմինն այնտեղ չէր, այլ վերափոխվել էր: Բարդուղիոմեոս առաքյալին էր վիճակված **Աստծու** իմաստուն նախախնամությամբ միջոց դառնալ **Աստվածամոր** վերափոխումը բացահայտելուն: Քարայրում միայն **Սուրբ Կույսի** հանդերձանքն էր:

Աստվածամոր պատկերը

Աստվածածնի մահվան պատմությանը կից ավանդությունը հիշատակում է նաեւ նրա պատկերի մասին պատմությունը:

Ըստ ավանդության՝ ի մխիթարություն Բարդուղիմեոսի, որ ներկա չէր **Տիրամոր** թաղմանը, նրան հանձնեցին այն կենդանագիր պատկերը, որը **Սուրբ Կույսը** տվել էր Հովհաննես Ավետարանչին: **Մովսես Խորենացու** վկայությամբ՝ Բարդուղիմեոսն այն Հայաստան բերեց եւ զետեղեց Անձեւացյաց գավառի Դարբնոց քար կոչված տեղում, ուր հետագայում, ի պատիվ **Տիրամոր** պատկերի, կուսանոց հիմնվեց: Իսկ հայ եկեղեցիների բոլոր խորաններն **Աստվածամոր** անունով են եւ նրա պատկերով:

Խաղողօրհնեք

Հին Ուխտում (Բ Օրենք ԻԶ 1-10) տարվա առաջին բերքը տարվում էր տաճար եւ ընծայվում **Աստծուն**: Ըստ օրենքի՝ դրանք ցորենը, գարին, խաղողը, թուզը, նուռը, ձիթապտուղն էին եւ այլն:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին օրհնության համար, որպես այգեքաղի երախայրիք, պտուղների միջից նախապատվությունը տալիս է **խաղողենու** ողկույզին. աշխարհակործան ջրհեղեղից հետո **Նոյ** նահապետը՝ *«այր հողագործ»* (Ծննդ. Թ 20), Արարատ լեռան ստորոտի դաշտավայրում այգի է տնկում եւ խաղողագործությամբ զբաղվում: Այդ ժամանակից ի վեր որթատունկի պտուղը դառնում է Արարատյան դաշտավայրի զարդը, համարվում պտուղներից ազնվագույնը եւ կոչվում **ՊՏՂՈՑ ԱՐՔԱ:** Այդ նվիրատվության արարողությամբ մարդիկ իրենց երախտագիտությունն էին հայտնում **Աստծուն**:

Մեր **Տերն** Ինքն Իրեն նմանեցրել է խաղողենուն, (Հովհ. ԺԵ 1-8). այն խորհրդապատկերն է **Սուրբ Աստվածածնի,** խորհրդանիշը *Նոր Ուխտի Քրիստոսահաստատ Սուրբ Եկեղեցու:* Այս առումով

էլ Հայ Եկեղեցում **Աստվածամոր** *Վերափոխման* տոնակատարության օրը *Սուրբ պատարագից* անմիջապես հետո տեղի է ունենում **խաղողօրհնեքի** արարողություն:

Ինչպես որթն իր կենարար հյութերով աճեցնում ու հասունացնում է ողկույզները, սույնպես եւ **Բանն Աստված** Իր **Սուրբ Մոր** ամենամաքուր արյունից Իր մարմինը կազմեց ու անճառապես միավորեց Իր **Աստվածությանը**:

Ինչպես խաղողենին իր պտուղների արյամբ՝ գինիով, մարդկային ազգին ուրախարար ու կազդուրիչ հյութ է տալիս, նմանապես եւ **Աստվածածնի** կենդանարար Ողկույզը՝ **Քրիստոս Աստված** Իր արյունն է պարգեւում յուրայիններին, ինչը սուրբ է, քավչարար ու կեցուցիչ՝ հավիտենական կյանքի պատճառ (հմմտ. Հովհ. Զ 54-55):

Խաղողօրհնեքի ընթացքում եկեղեցում կարդացվում է **Սուրբ Ներսես Շնորհալու** աղոթքը: Աղոթքում հիշատակվում է, որ **Աստված** ստեղծեց բուսականությունն ու պտղատու ծառերը, ապա **Ադամին** ու **Եվային** պարգեւեց ամբողջ *դրախտը*, բայց նրանք, օրհնազանց գտնվելով, դրախտից արտաքսվեցին, իսկ երկիրը նրանց պատճառով անիծվեց: Սակայն **Աստվածորդու** աշխարհ գալով՝ անեծքի կապանքը վերացավ, եւ մարդիկ ձերբազատվեցին մեղքի ու մահվան ծառայությունից:

Խաղողի օրհնության ընթացքում աղոթքներ են հղվում ոչ միայն պտղի, այլեւ դրա մշակողի, ընծայողի, հողագործի եւ հողի համար՝ **Արարչից** խնդրելով առատ, բերրի, կարկուտից ու սառնամանիքից զերծ տարի:

Այսպիսով, *խաղողօրհնեքը* առհասարակ **Աստծուց** մարդուն պարգեւված բերքի՝ բոլոր տեսակի պտուղների օրհնությունն է:

Աստծու օրհնությունը ստանալու համար մենք աղոթքով դիմում ենք **Սուրբ Աստվածածնին.**

Մայր եւ Կույս, աղախին Քրիստոսի, դո՛ւ, որ միշտ աշխարհի համար բարեխոս ես, բոլոր ազգերը քեզ երանի են տալիս:

Փորձի՛ր լրացնել

Ստուգի՛ր եւ բազմապատկի՛ր գիտելիքդ



Ուղղահայաց

1. Հույն բանաստեղծուհի: Գլխավորել է ազնվազարմ աղջիկների խմբակ, որտեղ նրանց սովորեցրել է երաժշտություն, երգ ու պար: **2.** … արեւի վառ գգվանքի տակ փռված հոլանի ծովն է շողշողում. Լեռների գլխին բյուրեղյա պսակ, Շուրջը ամպերի երամն է լողում (Ավ. Իսահակյան): **3.** Քաղաք Ռուսաստանի Դաշնությունում՝ Տոմ գետի աջ ափին: **4.** Համաստեղություն, որի ամենապայծառ աստղը Դենեբն է: **5.** Տոհմապետ, ազգապետ, նախահայր: **6.** Հավքն ու հովեր եկան կըշտիս, Անձեն դիպան ու անցան, …-սըրտի, փափագ-սըրտիս, Անխոս դիպան ու անցան (Ավ. Իսահակյան): **7.** Մեծ Հայքի Գուգարք նահանգի բդեշխ: **8.** Միջին դարերում ռոմանական երկրներում տարածված լարային նվագարան: **9.** Ժողովրդական ժողով Հին Հունաստանում: **11.** Գետ Ռուսաստանում, Արխանգելսկի մարզում: **19.** Գետ Հայաստանում, Արաքսի ձախ վտակներից: **21.** Հունգար գրող, *«Սոկրատես»* վեպի հեղինակը: **22.** Գարնան, ծաղկունքի ու պտղաբերության աստվածուհին հռոմեական դիցարանում: **24.** Իտալացի փիլիսոփա, աստվագետ, ինկվիզիցիայի զոհ: **25.** Իտալացի հայտնի ֆիզիկոս, որը 1959-ին արժանացել է Նոբելյան մրցանակի հակապրոտոն հայտնաբերելու համար: **26.** Ես իմ անուշ Հայաստանի արեւահամ … եմ սիրում, Մեր հին սազի ողբանվագ, լացակումած լարն եմ սիրում: **27.** Գերմանացի ֆիզիկոս, քվանտային մեխանիկայի հիմնադիրներից: **29.** Ամեն … մեջընն գոված դուն թամամ տասն իս, քամանչա՛, Նաքազ մարթն քեզ չի տեսնի, դու նրա պասն իս, քամանչա (Սայաթ-Նովա): **31.** Իտալացի հայտնի քիմիկ-օրգանիկ, ՍՍՀՄ ԳԱ արտասահմանյան անդամ, Մ.Լոմոնոսովի անվան ոսկե մեդալակիր: 1970-ին արժանացել է Նոբելյան մրցանակի: **33.** XI դարի վերջի XII դարի սկզբի ռուս տարեգիր: Կիեւ-պեչորյան վանքի վանական: **38.** Թանկարժեք մետաղ: **40.** Պատերազմի աստվածը Եգիպտական դիցարանում: **41.** Աչքածակ, անկուշտ, անհագ: 42.Առողջարան Հայաստանում: **43.** Երկաթագործ վարպետ: 44. Ա՛խ, ուռենի …ս ընկեր, Գթոտ երկրի հառաչանք, Սփռիր վերաս դողդոջ ստվեր, Անհույս սրտիս սփոփանք (Ավ. Իսահակյան): **45.** Հնդիկ նշանավոր քաղաքական գործիչ: Հնդկաստանի ազգային-ազատագրական շարժման ղեկավար: **47.** … Արագոն, ֆրանսիացի նշանավոր գրող եւ հասարակական գործիչ, հայ ժողովրդի բարեկամ: **51.** Զանգվածի միավորը միավորների ՍԳՎ համակարգում: **52.** Ակնկալություն, ակնկալիք, սպասելիք: **53.** Բազմագույն զարդանկարներով խավածածկ կամ առանց խավի գեղարվեստական գործվածք: **54.** Ամեն ինչ ունայն, … անցավոր, Աստղ էլ որ լինես՝ պիտ հանգչիս մի օր: **55.** Կյանքիդ ուղին լինի պայծառ, … քայլդ ազնիվ, արդար: Լինես խոհուն, լինես գիտուն Եվ ունենաս սիրտ զգայուն: **57.** Զրվեժ Չորուն գետի վերին հոսանքում: Աշխարհի ամենաբարձր ջրվեժը: **58.** Բույսերի եւ կենդանիների տաքսոնոմիական բարձրագույն միավորներից մեկը: **60.** Աղեղնավոր նվագարաններ պատրաստող իտալացի վարպետների հայտնի ընտանիք: **62.** Քաղաք եւ նավահանգիստ Ֆրանսիայում՝ Լուարի գետաբերանում: **63.** Ամենաերկար գետը Ֆրանսիայում: **65.** Շվեդ հայտնի ֆիզիկոս, Նոբելյան մրցանակի դափնեկիր (1981): **68.** Ռուս երգիծաբան գրող: *«Տասներկու աթոռ», «Ոսկե հորթ», «Մի հարկանի Ամերիկան»* վեպերի համահեղինակ: **70.** Գետ Ամերիկայում, Միսսիսիպիի աջ վտակներից: **71.** … Դարվիժեցի, առաջին հայ պատմիչն է, որի գործերը տպագրել են իր կենդանության օրոք: **73.** - Ա՛խ, ի՞նչ ասեմ … կտրած իմ հորը, Որ չխլեր հայոց սարերն ու ձորը, Չշամփրեր ինձ իր գրկում, քեզ՝ հեռվում, Հայի տղա, գիտեմ դու էլ ես վառվում (Շիրազ): **74.** Մարմնի տվյալ կետով տարված հատվածի մակերեսի միավորի վրա ազդող ներքին ուժ: **75.** Ադամ …, անգլիացի ականավոր տնտեսագետ եւ փիլիսոփա: **76.** Հայ ականավոր նկարիչ, ՍՍՀՄ ժողովրդական արտիստ: ՍՍՀՄ Գեղարվեստի ակադեմիայի իսկական անդամ: **78.** Ծոփքի եւ Կոմագենի միացյալ հայկական պետության թագավոր: **82.** Հագեցած ացիկլիկ ածխաջրածին: **83.** Սիրո աստվածը հռոմեական դիցարանում: Համապատասխանում է հունական էրոսին: **88.** Սրունքավորների կարգի թռչունների ընտանիքի թռչուն: **90.** Պատմողական գրականության ժանր: **91.** Ռիխարդ …, սովետական հայտնի հետախույզ, լրագրող, Սովետական միության հերոս: **92.** Անհամար, բազմաթիվ, բյուր: **93.** Ռուս նշանավոր ֆիզիկոս, քվանտային ռադիոֆիզիկայի հիմնադիրներից: Սոցիալիստական աշխատանքի հերոս: Լենինյան եւ Նոբելյան մրցանակների դափնեկիր: **95.** Ժամանակակից հայ ականավոր մաթեմատիկոս, Պ.Լ.Չեբիշեւի անվան մրցանակակիր (1962): **96.** Շարժակազմի(երկաթուղային) շահագործումն ու նորոգումն ապահովող ձեռնարկություն: **99.** Պարտավորության կատարման երաշխիք, որի դեպքում պարտատիրոջը հանձնվում է որոշակի գույք: **100.** … Հարությունի Բաբաջանյան, ականավոր հայ կոմպոզիտոր, դաշնակահար: ՍՍՀՄ ժողովրդական արտիստ: **101.** Ահմեդ Սեկու …, Գվինեայի հանրապետության պետական եւ քաղաքական գործիչ, 1958-ի հոկտեմբերից անկախ Գվինեայի նախագահ:

Հորիզոնական

1. Արամ Խաչատրյանի բալետներից: **6.** Գեղարվեստական հայտնի թանգարան Մադրիդում: **8.** Խփեմ …ս, օձ-կարիճների բընների գլխին …ս խփեմ, Այնտեղ բյուր անգամ ես ապահով եմ, քան թե մարդկանց մոտ, կեղծ ու ժպտադեմ: **10.** Լուսին Գեւորգի … (ծն. 1927), հայազգի ամերիկյան հայտնի օպերային երգչուհի(սոպրանո): **11.** Իսրայել …, հայ ազգային-ազատագրական շարժման ականավոր գործիչ: Նրա գաղափարները երկար սնուցեցին հայ ազատագրական միտքը: **12.** Թոմաս … (1478-1535), անգլիացի հումանիստ փիլիսոփա, պետական գործիչ եւ գրող: **13.** Լեհ գրող Բոլեսլավ … (1847-1912): *«Ազատագրված կանայք», «Փարավոն»* վեպերի հեղինակ: **14.** Եվ ի՞նչ է գանձը, … հիմարը տիրում է մարդկանց, ե՛ւ հանճար, ե՛ւ սեր,- բյուրավորների քամած արյունը, մեռելների միս, որբի արցունքներ (Ավ. Իսահակյան): **15.** Անատոլ …, ֆրանսիացի գրող: *«Աստվածները ծարավ են», «Բալթազար», «Սուրբ Կլարայի ջրհորը»* վեպերի հեղինակ: **16.** Գալիք, լինելիք: **17.** Քաղաք Հյուսիսային Կորեայում: **18.** Քերականական խոսքի մաս: **20.** Գործվածք, որի վրա ստեղծվում է յուղաներկ, գեղարվեստական աշխատանք: **23.** Չարչու կերպ մըտած ինչպես վիշապ օձ, Անցնում է ինքը՝ Շահ-… արքան (Հ. Թումանյան): **28.** Հայ գրող, դրամատուրգ Գարեգին Բաշիի Սարինյանի գրական անունը: **30.** Երկրագործական գործիք: **32.** Ամերիկահայ ականավոր գրող: *«Իմ սիրտը լեռներում է », «Քարանձավի մարդիկ», «Վեսլի Ջեկսոնի արկածները»* ստեղծագործությունների հեղինակ: **34.** Հոլանդացի ծովագնաց: Ավստրալիայի եւ Օվկիանայի հետազոտողը: **35.** Գարուն եկավ, կարմիր գարուն, Մեծ գետ դարձավ փոքր …ն (Աթ. Խնկոյան): **36.** Սառը զենք, նիզակի կարճ տարբերակ: **37.** Զրարջ: **39.** Օպերային հայ նշանավոր երգիչ, Նար-Դոսի որդին: **41.** Նշանավոր հնդիկ շախմատիստ, շախմատի աշխարհի չեմպիոն: **44.** Ամերիկյան նշանավոր ֆիզիկոս-տեսաբան, ծագումով հունգարացի: Նոբելյան մրցանակակիր (1963): **46.** Ռիխարդ Շտրաուսի օպերաներից: **48.** Անկիրթ, կոպիտ, բռի: **49.** Տկար, թույլ, անկարող: **50.** Թողած կարսում, գետի ափին, …ս՝ շինած անտաշ քարով, Կարսը թողած, Կարսի այգին ու հայրենի երկինքը մով (Ե.Չարենց): **52.** Բժշկագիտության բնագավառ, գիտություն առողջության մասին: **56.** Ուռազգիների ընտանիքի ծառերի ցեղ: **59.** Ժան Գաստոն … (1842-1917), ֆրանսիացի նշանավոր մաթեմատիկոս: Աշխատանքները վերաբերում են դիֆերենցիալ երկրաչափությանը: **61.** Նիկոլայ Նիկոլաեւիչ …, ռուս նշանավոր քիմիկ-օրգանիկ: Ռուսաստանի քիմիական ընկերության նախագահը (1868-1878-ին): **63.** Պերուի հանրապետության մայրաքաղաքը: **64.** …, քեզանից հզոր չկա սիրո վառման մարտերի մեջ: **66.** … ու լուռ մենակ կերթաս, ի՞նչ ասեմ, Ո՞ւր ես գնում դուն իմ հոգյակ նազե-նազ (Հավասի): **67.** Ժամանակի արտահամակարգային միավոր: **69.** Եվ …ներ թող ինձ հոշոտեն, Վայրագ հողմերը շաչեն ինձ վրա, Եվ այդպես, մինչեւ օրերիս վերջը, Քարավանս անդարձ գնա ու գնա (Ավ. Իսահակյան): **72.** …, Թուրան ողջ եկել են, Թաթուլն անհաղթ, աննկուն, Զորք ու բաբան խորտակվել են, նրա բերդը միշտ կանգուն: **74.** Գետային փոխադրամիջոց: Պատրաստված է իրար կիպ կպած գերաններից: **77.** Ֆրանսիացի նշանավոր կին գրող (1766-1817), Աննն Լուիզ …: **79.** *« … մենաստան»* (Ստենդալ): **80.** Ջեյմս … (1882-1946), գերմանացի ականավոր ֆիզիկոս, Նոբելյան մրցանակի դափնեկիր: **81.** Զորջ …, անգլիացի նշանավոր մաթեմատիկոս, մաթեմատիկական տրամաբանության հիմնադիր: **84.** Դանդաղ ճեմում էր ծովափին Երկրի …ն իմաստուն, Ոգին լեցուն երազներով, Միտքը պայծառ ու արթուն (Ն.Զարյան): **85.** Հայոց թագավոր 34-ից, պարթեւաց թագավոր Արտավան 3-րդի որդին: **86.** Մի հավք զարկի ես մի օր, Թռավ գնաց վիրավոր: Թըռչում է միշտ իմ մտքում Թեւը արնոտ ու մոլոր (հեղինակը): **87.** Իգոր Եվգենեւիչ …, ռուս ականավոր ֆիզիկոս, Նոբելյան մրցանակի դափնեկիր: **89.** Էմիլ … (1840-1902), ֆրանսիացի գրող, *«Թերեզ Ռաքեն»* վեպի հեղինակ: **92.** Շտեմարան, պահեստ, մթերանոց: **94.** … Այգեկցի, ականավոր հայ առակաբան: **97.** Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետության մայրաքաղաքը: **98.** Ստոր, նվաստ, անպատիվ: **100.** Ֆրանսիս Ուիլյամ …, անգլիացի ֆիզիկոս, աշխարհում առաջինն է ստեղծել մասսպեկտրոմետրը: **102.** - Էս է, որ կա … ճիշտ եմ ասում, …դ բե՛ր, էս էլ կերթա՝ հանց երազում, …դ բե՛ր: Կյանքն անցնում է տիեզերքում զընգալեն, Մեկն ապրում է, մյուսն ըսպասում, …դ բե՛ր: **103.** Ֆրանսիացի ֆիզիկոս՝ … Կյուրի, Նոբելյան մրցանակակիր: **104.** Հրի փոխվեցիր ու … դարձար (Ե.Չարենց): **105.** Հայ ֆիդայի ազգային-ազատագրական շարժման հերոս: **106.** Ռուս նշանավոր ֆիզիկոս, ՍՍՀՄ ԳԱ ակադեմիկոս եւ նախագահ (1945-ից): **107.** Կերպարվեստի զուգորդումներով ստեղծված զարդապատկեր:

Կազմեց Ժորա ՍՏԵՓԱՆՅԱՆԸ

Հայտարարություն

«Արարատի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի լիազոր մարմինը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար:

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը.

2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ կառավարման խորհրդի նախագահի անունով.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.

4) տվյալ հաստատության 5 տարվա զարգացման ծրագիրը թղթային եւ էլեկտրոնային տարբերակներով՝ սույն կարգի 26-րդ կետի պահանջներին համապատասխան.

5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները խորհրդի նախագահին կամ քարտուղարին առձեռն ներկայացնելու դեպքում պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են ***2023 թվականի օգոստոսի 16-ից մինչեւ սեպտեմբերի 5-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից մինչեւ ժամը 14:00-ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) եւ օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական եւ հիշատակի օրերից,*** Արարատի տարածաշրջանային պետական քոլեջում, հասցեն՝ ՀՀ Արարատի մարզ, ք. Արտաշատ, Աթարբեկյան 156:

Մրցույթը տեղի կունենա **2023 թվականի սեպտեմբերի 14-ին՝ ժամը 11:00-ին,** *«Արարատի տարածաշրջանային պետական քոլեջ»* ՊՈԱԿ-ում, հասցեն՝ ՀՀ Արարատի մարզ, ք. Արտաշատ, Աթարբեկյան 156:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (098) 34-23-30 հեռախոսահամարներով:

Էլեկտրոնային հասցեն՝ zaqaryana9494@.gmail.com:

Հայտարարություն

ՀՀ ԿԳՄՍՆ *«Երեւանի Ն. Ածեմյանի անվան հ. 2 պետական քոլեջ»* ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ՝ *«Խոհարարական գործ»* (*«Խոհարարության պատմություն»* (36 ժամ), *«Հիգիենայի եւ սննդի անվտանգության սպասարկում»* (36 ժամ), *«Խոհանոցային սարքավորումների շահագործում»* (36 ժամ), *«Խոհարարական աշխատանքների նախապատրաստում»* (12 ժամ)), *«Մարքեթինգ (Շուկայաբանություն)»* (*«Գործակցություն կազմակերպության ստորաբաժանումների հետ»* (180 ժամ), *«Ծառայությունների ոլորտի մենեջմենթ»* (72 ժամ), *«Աշխատանքային գործունեության ընդհանուր հմտություններ»* (72 ժամ), *«Հաճախորդների ներգրավման աշխատանքներ»* (68 ժամ), *«Մարքեթինգային հմտություններ»* (252 ժամ), *«Վաճառքի հաղորդակցություն»* (36 ժամ), *«Կազմակերպության ներքին եւ արտաքին միջոցներ»* (72 ժամ), *«Գնային քաղաքականության մշակում»* (54 ժամ), *«Ապրանքային քաղաքականության մշակում»* (54 ժամ)) մասնագիտական առարկաների մոդուլների դասախոսի թափուր տեղերի համար.

Մանկավարժի համապատասխանության նկատմամբ պետական կրթական չափորոշչով սահմանված պահանջները.

- դասընթացի բնույթին համապատասխանող միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում կամ տվյալ մասնագիտական գբաղվածության բնագավառում աշխատանքային գործունեության փորձ:

Մրցույթին մասնակցելու համար անձը ներկայացնում է՝

1. դիմում (լրացվում է տեղում),

2. կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը եւ պատճեն),

3. անձնագիր (բնօրինակը եւ պատճեն),

4. աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),

5. ինքնակենսագրություն(Ձեւ 4),

6. մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

7. այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ ՀՀ համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,

8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինվորական գրքույկ (բնօրինակը եւ պատճեն),

9. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են ***մինչեւ 2023 թ. օգոստոսի 30-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***2023 թ. սեպտեմբերի 1-ին՝ ժամը 11:00-ին եւ ժամը 12:00-ին,*** Երեւանի Ն. Ածեմյանի անվան հ. 2 պետական քոլեջում, հասցեն՝ ք. Երեւան, Նոր Նորքի 2-րդ զանգված, Մոլդովական 37 Ա:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 67-23-01, (010) 67-24-43 հեռախոսահամարներով:

Քոլեջի մասին առավել մանրամասն՝ n2college.am:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ ԿԳՄՍՆ *«Երեւանի Ա. Մարգարյանի անվան հ. 29 ավագ դպրոց»* ՊՈԱԿ-ի ֆիզկուլտուրայի (22 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***օգոստոսի 16-ից մինչեւ օգոստոսի 29-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 14:00-ը, բացի շաբաթ,կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***օգոստոսի 30-ին՝ ժամը 13:00-ին,*** ՀՀ ԿԳՄՍՆ Երեւանի Ա. Մարգարյանի անվան հ. 29 ավագ դպրոցում, հասցեն՝ ք. Երեւան, Սարյան 23:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 58-32-70 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արմավիրի մարզի *«Վաղարշապատի Վ. Ոշտունու անվան հ. 11 հիմնական դպրոց»* ՊՈԱԿ-ի ինֆորմատիկայի (6 դասաժամ), ֆիզիկայի (12 դասաժամ), մաթեմատիկայի (6 դասաժամ), ֆիզկուլտուրայի (20 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

